

891.99

6 - 79



Ը ԳՐԵՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԽԵԱՆ Ծ

• \* b h \*

2003

# ՍԱՍՈՒԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ գիզ

ՀԱՅՈՒԹ Ա. Ա. ՋԱԴՅԱՆ

Հնցան տարիներ, անցան տապ օքեր,  
անցան սառնաման ցրտաշունչ հողմեր  
Բայց չայ մուսայի վիշտըն ի սրտէն  
Հանցան, հանապաղ հեծէ զօր զիշեր։  
Ա. Ա. ՋԱԴՅԱՆ.



1910 թ.

Ա. Լ. Մ Ի Ա Ն Ի Ա Տ Ա Ր Ա Ն Ո Ւ Թ  
Վ Ա Ր Ա Ր Ա Շ Ա Ր Ա Ր Ա Շ

01 JAN 2009

19 NOV 2010

Հ Արմ.  
Հ 3-3248<sub>2</sub>

# Վ Ա Թ Ա Ն

891.99

Ահ-79

↔ \* b h \*

# Ս Ա Ս Ո Ւ Ն

Գլուն է 25 կոտյէլ.



Անցան տարիներ, անցան տապ օրեր,  
Անցան սառնաման ցըտաշունչ հողմեր。  
Բայց չայ մուսայի վիշտքն ի սրտէն  
2անցան, հանապազ հեծէ զօր գիշեր։

Յ. Աւագան.

ԳՐԵՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.ԻԶԵԱՆ.

ՀԻՅ. № 10801

1909 թ.

Ս. ԷջՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՎԱԴԱՐՃԱՎԱՏԱՏ

21 FEB 2013  
BOSNIA & HERZEGOVINA

21090

VI

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Աւանդութիւնն ասում է՝

Այն ժամանակ, երբ Սատունը դեռ ևս գոյութիւն չունէր, Կիլիկիան տատանւում էր երկպառակութեան մէջ։ Այդ ազգի ազգի բոնակալութիւնները ստիպեցին տեղական հայերին իրենց սեփական վայրերից ուրիշ տեղեր փոխուելու։ Այդպիսի անձուկ ժամանակներում, երբ մարդ շփոթուած, իր գլուխը չէր ճանաչում, Կիլիկիայից խոյս տուեց, հեռացաւ իր եօթն եղբայրներով մի ազգատոհմ։ Սրանք շատ թափառեցին լեռնային քարքարոս վայրերում իրենց համար բնակաւէտ տեղ գտնելու, սակայն ոչ մէկն էլ այնքան յարմար չէր, որքան Մուշը, ուր միառժամանակ մնալով ծանօթացան երկրի դիրքին և սահմանակից գիւղերին ու քաղաքներին։ Այսեղ շարունակ շըշագյելով նրանք իրենց ապրուստն էին հայթայթում։

Եօթն եղբայրներից երկուսը, Մրգոն ու Գրգոն՝ բաժանուելով եղբայրներից, առնում են իրենց ընտանիքն ու գնում բնակւում երգրումում։ Սրանք տոկուն աշխատութիւնով, ինչպէս ասում է աւանդութիւնը, մեծ հարստութեան տէր են դառնում։ Այդ հարստութիւնը հոչակւում է ոչ միայն երգրումում,

4. Պատմել են՝ Գէլէկ՝ Գուգանցի ոմն Թորոս Պետոյի տանից 55 տարեկան։ Խլտեցի Արեւշատը, որ երկար տարիներ իրեւ բանուոր ապրում էր Վաղարշապատում։ Խոկ վերջին անգամ պատմել է Սատունի Փառայ գիւղի ծխատէր Յովհաննէս քահանայ Տէր Խաչատրեանը։ Սոյն քահանայի պատմածով ներկայ գրքով, բացի Նկարագրութիւններից՝ Խօսակցութիւնները զրի եմ առել տեղական լեզուով, սակայն յարգելի հանգամանքով Թողեցինք եւ անունը «Վաթան եւ Սատուն» նշանակելով՝ տպագրեցինք ներկայ ոճով։



Կ0638-67

այլ նաև շրջակայքում։ Տեղական այլազգիները որ ընդունակ էին, խեղճերին հարստահարելու, սկսեցին ձեռնամուխինել այդ հարստութեանը։—Ամեն անգամ, երբ տաճիկները մանէին այդ հոչակաւոր տունը, «դիշք իր ասից» պատրաստ պիտի լինէր, պէտք է վարձարուէին մի որևէ թանկագին իր կամ դրամով։ Դիշքիրասու այդ ձանձրալի սովորութեանը վերջ տալու համար Մրգոն իրենց տան դռան ներսի շէմում մի շատ մեծ հոր փորեց. երբ պատահում էր, որ հարստահարողներից որևէ մէկը դալիս էր այդ տեղ, իսկոյն հորի մէջն էր զլորում։

Մրգոն շարունակ նստած էր լինում դռան առաջ և պատահած տաճիկ հիւրերին յանձնելով Գրգոյին, տսում էր. — Տղա, լաօ «Թըլ հորիկ»։ իսկ Գրգոն, որ շատ լաւ էր հասկանում «Թըլ-հորիկ»ի միտքը, առնում էր իր հետ տաճիկ զոհին և տան դուռը բանալուն պէս ճարպկութեամբ հորի մէջն էր զլորում։ Եւ ահա այդպիսով Մրգոյի յաճախ արծարծած «Թըլ-հորիկ» բառը տարածուեց էրզրումում։ Ապա այնուհետև ասում էին. — «Թըլ-հորիկների մօտ. Թըլ-հորիկների տունը, Թըլ-հորիկն եկաւ և այդ անունովն էլ ճանաչւում էին».

Մրգոն դեռ երկար կշարունակէր «Թըլ-հորիկ» անելը, սակայն հորի լցուելու պատճառով ուզեց հեռանալ. բայց որովհետեւ եղանակը ձմեռն էր, հետեւ պէս պէտք էր լուրջ խորհել։

Մրգոն մի խելացի միջոց մտածելով, ասաց. — «Գրգոն, լաօ, բերենք մերէշերի ուները թարս նալենք, նոյնպէս հագնենք և մեր չարուիները, և այդ ձեռվ դնալով կազատուենք ամեն վտանգից, որովհետեւ որքան էլ նոքա փնտրելու լինեն, սակայն, որ եղանակը ձմեռն է, մեր հետքը չեն կարող դանել։

Կէս դիշքերն անցել էր։ Մշուշ ու մուայլ ամպերը ծածկել էին էրզրումի լեռները. ամեն տեղ, ամեն սար ու ձոր ծածկուած էր սպիտակ սաւանով։ Այդ յարմար դիշքերին Մրգոն ու Գրգոն ամեն գործ տեսնելուց յետոյ, հագան «Թարս չարուիներն», (այսինքն չարուիսի քիթը, բութի մասը կրունկի կողմը դարձըրին), և այդպէս առնելով իրենց կայք ու գոյքը դարձեալ դիմեցին Մուշ։

Մրգոյի հեռանալուց մէկ-երկու օր դեռ չանցած, «Թըլ-հորիկների դիշքիրասուն սովորածներից մէկը միւսին դիմելով, ասում է. — Գնանք, Թըլ-հորիկների մօտ «շարաբ» խմենք, զուարձանանք»։

— Գնանք, պատասխանում է ընկերը, և ըստ սովորականին մտնում են Թըլ-հորիկների բակը, բայց ինչ են տեսնում, ահա մի հոր, լի մարդկանց դիակներով. անմիջապէս յետ դառնալով՝ իրողութիւնը տարածում են քաղաքի բոլոր մասերում։

Տաճիկները սաստիկ յուզուեցին, Թըլ-հորիկներից վրէժ լուծելու ելան. բայց թէկ լեռ չմնաց, որ բարձրացան, ձորեր չմնաց, որ իջան և մաղարայ չմնաց, որ խուզարկեցին, սակայն բոլորն ի զուր և ի զուր անցան. որովհետեւ, որ կողմն ոտքերի հետքեր էին տեսնում, ուշագրութեամբ այն դիտում էին և իրենց թւում էր, որ այն ամեն հետքերն էլ դէպի քաղաք, դէպ էրզրումն էին տանում։ Շնորհիւ թարս չարուիների և նալերի<sup>1</sup>, տաճիկ խուժանը երկար վարանումից յետոյ անյօյս յետ է դառնում. իսկ Մրգոն ու Գրգոն ազատուելով ամեն վտանգից, զալիս են Մուշ. բայց միայն թողնելով էրզրումի չայց և թրքաց մէջ «Թըլ-հորիկ» անունը։ Այժմ, սակայն

1. Զարուիների այդ ձեռվ հագնելու համար, «մի ժամանակ Սասնեցւոց «Թարս չարուիս» կասէին»։ ասում է Արեշատ Խլաթեցին։

«ԹԸԼ-ՀՈՐԻԿ» անունն կրում էին ոչ միայն այդ երկուսը, այլ և ցեղով-եօթն եղբայրներով։

ԹԸԼ-ՀՈՐԻԿՆԵՐՆ այդ ձմեռն ևս մնում են Մուշ. իսկ գարնանը՝ վերցնելով իրենց բոլոր ստացուածքը, ճանապարհում են Մուշից դէպի արևմուտք, դէպ դէմ հանդիման երեսով բարձրաբերձ հանդոկը. բայց նախքան հանդոկին համար, հանդիպում են մի փոքրիկ վտակի, որը քչքչալով վազում էր դէպի հարաւ և կարելով իրենից անհամեմատ մի մեծ գետ և շարունակելով իր ուղղութիւնը վազում էր կրկին հարաւ, թողնում են հանդոկը։—Փոքրիկ վտակի ուժեղութիւնը, թափը «ԹԸԼ-ՀՈՐԻԿ»ներին զրաւեց և Պետոն, որ ամենամեծն էր, ասաց.—Եղբարք, արիք, գնանք բնակուենք այս վտակածին վայրում, որովհետեւ, որքան ուժեղ ու զօրեղ լինի ջուրս, այնքան աւելի ուժեղ ու զօրագոյն կլինին նրանով սնուած ու մեծացած մարդիկ։

Պետոն ծռում է ճանապարհը, և գալով համար վտակածին լերանը, Ծովասարին, ասում է. — «Ապրենք այստեղ ու մեռնենք այստեղ»։

Այտեղ, ճիշդ Ծովասարից բղխող գետակի ափին, որին այժմ Սասնոյ ջուր կամ գետ են կոչում, ԹԸԼ-ՀՈՐԻԿՆԵՐԸ մի փոքրիկ գիւղ հիմնելով, նրան իրենց վրայ կրող ԹԸԼ-ՀՈՐԻԿ անունն են տալիս. շինում են և մի մեծ փայտածածկ տուն։ Սակայն տեղական ժայռով գործը դարերի ընթացքում փոխելով այդ մականունը, դարձրել է «Դալմորիկ» կամ «ԹԸԼՈՐԻԿ»։

Փայտածածկ տունը պատրաստելուց անմիջապէս յետոյ պատսպարւում են մէջը. Մի օր գերաններից մէկն ձնշուելով հողի ծանրութիւնից, ուժեղ ճռճռոցով քաշ է ընկնում, և ամենքը սարսափահար եղած ճիշեր հանելով գոռում են. — «Միւն բերէք, սիւն, բայց նախքան սեան բերելը, Մզրոն, որ ամենից բարձրահասակն էր, իր տեղից վեր ցատկելով ձեռքը վեր

բարձրացրած գերանին դէմ տալով, ասում է. — Հայդա ես «մսա-սուն»։ Մզրոյին կատակելով ամենքն էլ ասում են. — Մզրոն «մսա-սուն» է, մսա-սուն։ Պետոն էլ հետեւելով միւսներին, իր այդ վայրն անուանում է «Մսա-սուն», (այսինքն՝ մսէ սիւն). սակայն, ինչպէս «ԹԸԼ-ՀՈՐԻԿ» նոյնպէս և «Մսա-սուն» դարերի ընթացքում եղծուելով մնացել է մեղ պարզ «Մսա-սուն»։ անունը. իսկ գերանի կոտրուելու մասին երգ են յօրինում, որ մինչեւ այժմս էլ առասպելաբար երգում են. —

«Տունը շինինք գիտու բերան, ջանիման... Վրէն թալինք ջուխս մ' գերան, ջանիման. Մէկն էր խոխի մէկ լը ծիրան, ջանիման. Խոխին կոտրաւ մնաց ծիրան», ջան, ելն։

Կարձ ժամանակից յետոյ Սասունը հայրենագուրկ հայերով բազմանալով դառնում է մի ուժեղ համայնք։ Այդ համայնքը որքան ուժեղ ու քաջկոտ էր, այնքան աւելի նուիրուած էր հայրենասիրութեան, եթէ, երբ և իցէ հայ ժողովուրդը նեղում էր մի որ և է օտար ոյժից, Սասունցին խոկոյն օգնութեան էր համառում. Սակայն աւանդ, որ այդ ուժեղ հոչակաւոր շէն գիւղերն երկար չեն մնում այդ բարեկեցութեան մէջ։

Այն ժամանակ, երբ տաճիկները զօրանում են, սկսում են ուժեղ թափով ասպատակել լեռնային երկիրներն ու փոքրիկ վայրերը, միաժամանակ ասպատակում են և Սասունը. Վերջին անգամ Սասնեցիները ստիպուած են լինում անձնատուր լինել բռնակալ ոյժին, շատերը մոլիք սրերին ճարակ են դառնում, մի քանիսն էլ, փախնում, իրենց զլուխն են ազատում կամ

1. Պատմել է 56 տարեկան Պօղսա Սարգսեան Գոմերցին։ Պօղսը եղել է ընիկ Սասնեցի, պատանի ժամանակից գալով Մշոյ գաշտ, մնացել է Գօմեր գիւղում. Սասունի խնդկատակութեան մասին նա լսել է իր ծնողների պատմածներից։

կալանաւորուելով կրօնափոխ լինում: Ապա այդ վայրագութիւններից յետոյ, բոլոր գիւղերն էլ քար ու քանդեն անում, որպէսզի հայերն այլևս այդ տեղ բուն չը գնեն: Սակայն մեծ էր գորութիւնն Աստուծոյ, նա դաշձեալ գթալով հայերի վրայ, վերստին առաքեց մի գորեղ ձեռք Սամնեցց համար, որ նա իմի ժողովէ իր ցրուած ոչխարներին՝ մի հօտ, մի հովիւ կազմելու համար:

Այդ գորեղ ձեռքը Թորոսն էր, որ կիլիկիոյ իշխանական տոհմերից մէկի շառափղը լինելով, ԺԵ-ԴՊ դարու կէսերում, Լևոն Զ-ից յետոյ՝ տեսնելով կիլիկիոյ պառակտումներն, մի խումբ մարդկանց զլուխն անցած վերջին հրաժեշտը տալով կիլիկիային՝ հեռացաւ, եկաւ Սասուն. այս մասին պիտի խօսենք առաջիկայ գրքում:

Թորոսն աշխարհի փորձերին ծանօթ մի անձն լինելով, իր անխոնջ աշխատութեամբ ձգտում էր միշտ բարելաւել գաւառը, և իր ցեղը հովուելով՝ պաշտպանել նրա սեփականութիւնը անիրաւութեան դէմ, այնպէս, որպէս մի գերատաստանի հայր հոգում է իր որդւոց պիտոյքը: Նրա բարոյական հեղինակութիւնը մի անսպառ գանձ է եղել, որի էական բուն իմաստն եղել է՝ «Համբերութիւնը կեանք է»: Ժողովուրդը հպատակուելով իր զեկավարող պետին, այն աստիճան է յարգել նրան, որ «Պատը» տիտղոսն է տուել, և այն աստիճան սիրել, որ բոլորն էլ նրա զլսով են երգուել ու ասել.— «Մըր Պարու հըւադ», «Մըր խօր պարզա զլոխ»<sup>1</sup>:

Թորոսին յաջորդում է իր որդի Ապանը, բայց կարձ ժամանակ. ապա հեռանալով անցնում է Արարատեան դաշտ: Դրա մասին խօսելիք կունենանք Բ. հատորում:

1901 թ. Նոյեմբ. 14:

Գրաւարիւն Աւչեան.

1. Աւելի խիզանցիք են զործ տծում իրենց երգման ժամանակ, ասում է Յովհաննէս քահ. Տէր խաչտղեանը:

Վ Ա Շ Ա Ն  
Ե Կ

Ս Ա Ս Ո Ւ Ի Ն  
Գ Հ Ո Ւ Խ Ա.

Կիլիկիայի գաղրականութիւնը Սասունում.

Երեկոյ էր. ամպերի քովաները իրար ետեից վազվելով կապոյտ երկնակամարի երեսին տեղ տեղ բլուրներ էին կազմում: Քանի գնում՝ խտանում էին ամպերը և զեռ կէս ժանցած սաստիկ որսում բարձրացաւ: Դզրդում էր երկնաքը, թնդում էր օդը, փչում էր հողմը և շվշվացնելով սատանայի ձայներ էր հանում. իսկ երկիրը սարսափանար եղած դողդողում էր: Ամեն ինչ ահարեկուած յուզում, տարուբերում էր, երկիրը որբացել էր իր խնամակալից, այդ պատճառով էլ ամեն ինչ սպոյ ստուերով էր քօղարկուած: Մարդկային ազգը մահուան երկիւղից տատանուելով՝ փախուստ առած գննում, հեռանում էր. այդ զրութեան, թշուափ տիտուր սիրաց փոքր ինչ սփոփողը միայն արենգակն էր մնում, որ մերթ ընդ մերթ լուսաւորում՝ տանջանքի բովից ազտուելու և սակաւիկ ազատ շունչ քաշելու միջոց էր տալիս. սակայն աւաղ, որ դաժան երկունքին նա ևս չդիմացաւ, նա ևս փախուստ առաւ և արագ արագ մազցելով իւր մօր գիրկը հանգաւ: Այդ սոսկալի բոպէում արիւնարրու խուժանը կլանում էր շատ զոհեր:

Այդ իսկ հսկողական ժամին իր սովորութեան համեմատ առիւծասիրտ Թորոսը զարձեալ սիրտ առաւ և մէն մենակ դուրս զալով տանից, բացեց սրահի երկիւղկանի զուռը, զզուշապէս զիտեց փողոցի ուղղահայեաց հորիզոնն և կանգ առաւ: Այդ բոպէին ոչինչ չերևաց. նա կարծեց, թէ լուիլ էր

ամեն ինչ, սակայն մէկ-երկու քայլ չարած լսելի եղաւ էլի մի վայնասուն, մի սրտամորմոք հառաջանք, որը քամու բըվկոցի հետ հետզհետէ անհետանալով կորչում էր խորշ փողոցների մէջ: Քամու բըվկոցի միջից հազիւ լսելի էին միայն վայ եաման, վայ եաման ... խօսքերը: Այդ հետց որ լսեց թորոսը, կանգ առաւ, փոքր ինչ քաշ գցեց զլուխը, խորասուզուեց մտքի մէջ. սակայն զգաստացաւ, դարձեալ շարժուեց նրա հոգեկան յուղմունքը, նա կրկին յետ դարձաւ տուն, ցած բերեց պատից քաշ ընկած դաշոյնը, հանեց պատեանից ու դուրս գնալով ասաց.—«Լայ Դրգո, հետեիր ինձ, հայդա, շնոր» և ինքն շտապով դուրս ծլվուեց տանից և անյայտացաւ փողոցների մէջ: Նա երկար ժամանակ մերթ շրջում էր, մերթ կանգ առնում: Կրկնուեցին դարձեալ «Վայ, եաման, վայ, եաման», ... խօսքերը, բայց որքան կարելի էր, պէտք էր շտապել, պէտք էր շուտ հասնել օգնութեան, մտածեց թորոսը և առանց վարանելու հասաւ յետեներից, ապա մօտենալով նկատեց, որ եզրապատճի սպաները մի քանի հարս, աղջիկների տանջելով քշում տանում են: Թորոսը Գոռաց.—«Հէյ, դուք թշուառականներ, հերթք չեղաւ, անոպորմ ոճրագործներ»: Փայլից դաշոյնը, սպաները փախուստ տուին սարսափից: Իսկ թորոսն առնելով անմեղ զոհերին, անյայտացաւ մթութեան մէջ:

Երկրի այդ իսկ խոռվացոյզ ովկեանի մէջ, մարդկային ազգը, Հայ ժողովուրդն առանց վհատուելու պատրաստութիւններ էր տեսնում այդ ճգնաժամից ազատելու իւր միակ զլուխը գոնէ:

Թորոսը մի խումբ մարդկանց հետ ճանապարհորդում էր, աներկիւղաբար ճեղքուելով ահարեկող լեռներն ու ձուրերն, վերջապէս նրանք հասան Հալէրի խորխորուն ձորերից մէկը, ուր զիշերային ժամին հանգիստ առան: Երանց հաշցի լի պարկերը դատարկուելու վրայ էին. սովատանջ մաշնուկներն իրենց քնի խորքից յաճախ վեր թուշերվ ճայնում էին.—«Մամօ, սովուկ իմ՝ ընձի խաց», մի ուրիշն էլ՝ «Ա. կօ, բորիկ իմ՝ ընձի չարժւխ» ...:

Չարքան ճանապարհորդներ:

Թորոսը չէր քնում, նա մինչեւ լոյս հրեշտակի նման իր կրակուտ աչքերն այս ու այն կողմ յառած զգուշութեամբ հսկում էր հօտին, բայց մանուկների ծլունգ-ծլունգ լինելու

ու զառանցումը կարապեափ սիրտը ճզմեցին և հոգին մորմոքեցին.—«Վաթան, վաթան, ինչն առել տուիր թշնամուն և մեզ յանձնեցիր այս դարն ճակատագրին: այս ինչ ցաւալի տեսարան է, ո՛հ, մըմնջաց թորոսն ինքն իրան:—Մի կողմից մեր բաղդահնդիր թափառումը, մի կողմից այս երեխաների անվերջ պահանջները, միւս կողմից մոլեսանդ, արիւնաբու տաձիկ և թափառական ցեղերի սարսափե, արդեօք ուր դիմենք և որին խնդրենք: Սակայն ով Տէր, մենք քեզանից չենք յուսահատուի, յուսահատուելու էլ իրաւունք չունենք, որովհետև՝ «Զի զոր սիրէ Տէր, խրատէ, տանջէ զամենայն որդի, զոր ընդունի», ուստի վստահաբար թեզ ենք դիմում, որպէսզի մեզ էլ որպէս իսրայէլացիների շուտով հասցնես մեր Աւետիաց երկիրը, առաւելապէս այս մանրիկ երեխաներին, որ սովի ճարակ չդառնան այս ամայի անապատում: ասաց և զարձեալ սրտի խորքից հառաչեց:

Արդէն առաւօտ էր. Թորոսը անդադրուն կարապետում էր իր հօտին. նա թէկ շարունակում էր իր ճանապարհորդութիւնը, բայց թէ մինչեւ ուր, այն ինքն էլ չգիտէր, այլ թողել էր միայն բաղդին: Վերջապէս հազար ու մէկ տառապանքներ կրելով՝ համնում է Սասուն: Թորոսի համար սգալի էր, երբ տեսաւ այդ հոչակաւոր գաւառն աւերակ դարձած, և զեղեցիկ ու սիղաւէտ դաշտեն, գատարկամարդ և ամայացած:

Ամեն ինչ տիսուր էր, ամեն ինչ լոել էր:  
Լոել էր լեռներում հայ հովուի սրճի մեղմիկ ձայնը. լոել էր գաշակերում շինականի արօրական երգն ու մեղեղին:

Զը կար վարդենի, սուսան ու սմբուլ, չկար գայլալող մեղեղի բլբուլ, ամէն ինչ լուս էր. լուս էր սոխակն, կաշազակ, ճպուռ, գէթ պատմէին գտաւոիս անցքերն տիսուր, չկար և ոչինչ: Բայց կար մի նշոյլ զորա անցեալից, որ տեսնովի միտքը զարթեցնելով յիշեցնումէր նրան իր պատմական աղատասուն անցեալը դա վլատակների կոփածու բեկորներն էին, որ յաճախակի ասպատակութեան մատնուելովը տեսնովին ներկայանում էին որպէս աւերակների մի հոգակոյտ: Ամեն ինչ տիսուր տպաւորութիւն էր թողնում թորոսի վրայ: Միայն գաւառը շատ յարմար էր բնակութեան համար իր լեռնական զիրքի շնորհիւ, տեղ տեղ երեսում էին տափարակ տարածութիւններ, ուր բնակուելը կարելի համարելով՝ թու-

բոսն ասաց.—«Ահա մեր Աւետեաց երկիրն»: Այստեղ բնաւկութիւն հաստատելով՝ «Դալորիկ» գիւղը հիմնեցին:

Տարինիրով ձնշուած, հալածուած այդ ժողովութզը Թորոսի անվեհերութիւնմբ տակաւ առ տակաւ իր նոր բնակավայրում սկսեց ազատ շունչ առնել. իսկ գաւառը գնալով հետզհետէ բարգաւաճում էր: Մաղկում էր Սասունը իր տուկուն և տաղանդաւոր անհատների ջանքերով: Նրանք շերամի և բրդի թելերից ամենաընտիր հազուսեղէններ, գորգ, կապերաներ պարասատելով վաճառելու էին տանում մեծ և հարուստ քաղաքները, ըստ որում աւելի ծաղկեց վաճառականական արհեստը Սասունցւոց մէջ և յարաբերութիւններն քաղաքցւոց հետ՝ այնուհետեւ յաճախակի դարձան:

Ժողովրդի թիւը քանի գնում աւելանում էր Սասունում. ծաղկում էր տնտեսութիւնը, առաւելապէս խաշնարածութիւնը, որովհետեւ երկրի գիրքը վերջինիս աւելի էր նպաստում և ժողովրդն որպէս լիոնցի, աւելի հմուտ և ընտելացած էր խաշնապահութեան:

Սասունյ երիտասարդութեան համար վաճառականութիւնը մի միջոց էր, որ նպաստում էր նրանց գաւառից դուրս՝ քաղաքներ, գիւղեր ու այլ տեղեր վշվելու՝ նրանց հետաքրքրում էր աւելի վրօսանքը, քան անձնական շահը: Այդպիսի տեղերին աւելի ծանօթանալու համար Թորոսը հարմար համարեց երբեմնապէս Սոլանին ուղարկել այդ կողմերը:

Օրը տիսուր էր. մեզն ու մասախուղը փակել էր երկինքն ու երկիրը, հետն էլ կաթկաթում էր անձրեր. դադարել էին թուշուների մեղեղիները՝ էլ չէին գայլայնում: Բնութեան այդ տիսուր ժամուայ հետ մի շատ խորից մի քաշեց Թորոս Պապը: Արդեօք ինչ ընկաւ նրա միտքը. նա յիշեց Կիլիկիան, իր հայրենի տունը, իր նախկին փարթամ փառքը... Այն, նրան ներկայանում էին մի շաբթ իրողութիւններ Կիլիկիայի վերջին դէպքերից, որոնց ամենին ականատես էր ինքը, Թորոսը:—«Ա խ, կրկնեց Թորոսը. ես ինչպէս մոռանամ Կիլիկիան, իմ վաթանը. վաթանի հացն ու ջուրն այլ համ ունեն, վաթանի հողն ու օդն այլ հոտ են բուրում. մի, վաթանի արևն ու լուսին էլ տարբեր արշալոյսով են ճառագայթում: Ա՛խ վաթան, վաթան, ինչպէս մոռանամ դրացիներիս, ... Արդեօք ինչ եղան նրանց վերջը»: Եւ ահա,

այն դէպքերի բարբարոսական ողին, ուրուականը կանգնեց Թորոսի առաջ և պաշարեց նրա միտքը. Թորոսն ըրպէտապէս վարանեց.—«Ահա գալիս են իմ սիրելիները, իմ բարեկամները և ահա, գալիս են իմ դրացիները...: Սակայն, աւաղյ ուշքի գալով նա համոզուեց, որ շատ հեռու են իրենից ...: «Սակայն ինչու, կարելի է գա նախազգացումն է, որ ես յուսացի և կամ՝ հօ ի զուր չէ ասուած «Համբերութիւնը կեանք է», գուցէ մի օր, մի բոպէ կըտեսնեմ... ախ, անգութ ճակատագիր ... ասաց Թորոսը, և ուշքի գալով, գոչեց.—Գնա կուրիր, հեռացիր ինձանից սատանայ, ես յոյս ունեմ, ես հաւատում եմ, որ «Համբերութիւնը կեանք է»:

Մինչ Թորոս Պապն այդ էր մտածում, ահա լիւսային սուրճանդակներից—Տիկոն ու Մզլոն մի խումբ մարդիկ առաջներն արած քրտնամխած բերելով ներկայացրին նրան: Մզլոն, որ Տիկոյից աւելի ճարպիկն էր, չոմախը ձեռին Պապի սենեկալը մտնելով, գլուխ տուեց ու ասաց.—Պապ, մի խումբ նոր մարդիկ ենք գտել բերել:

—Ո՞ւսեղից:

—Իշխան ձորից:

—Ի՞նչ ազգ են, ի՞նչ կրօնի են պատկանում:

—Խայ ենք ասում են ...

—Հիմայ մըտել են:

—Սարայում:

—Հայդէ բերէք ինձ մօա:

—Տիկո, Տիկո, ձայն տուեց Մզլոն. այդ մարդկանց բեր.

Տիկոն առաջնորդելով նորեկ մարդկանց ներկայացրեց Թորոս Պապին. Թորոս Պապը սկսեց իր մանրակրկիտ հարց ու փորձը և խկոյն ճանաչեց, որ իր դրացիներն են. ապա տեղից վեր բարձրացաւ, լացակումած ձայնով բարձր ազգակերով ասաց.—«Ես Թորոսն եմ, Թորոսը, ձեր բարեկամը, ձեր դրացին»: Եւ գրկախանուելով Խօջայ Սաքոյի հետ, շարունակեց.—ավ իմ թանկագին բարեկամ. վառք Աստուծոյ, որ ձեզ էլ աւեստում եմ կենդանի շուրջու բոլորուած: Երկար ժամանակ զառանցում էի Կիլիկիայի անունը

1. Եւրաքանչիւր նորեկ երբ բազգախնդիր եղած թափառելով ներս էին լնկնում այդ գաւառը, նախապէս պիտի ներկայանար Թորոս Պապին. վերջինս նորեկ հիւրի թափառելու պատճառը քննելուց յետոյ թոյլ էր տալիս այդ գաւառում բնակելու:

տալով, յիշում էի սիրելիներիս, և չէի հանգստանում. բայց այժմ, գոհութիւն Աստուծոյ, սա իրականութիւն է. ուրեմն հաստատ հաւատացած եղէք, որ ի զուր չէ ասուած «Համբարութիւնը կեանք է»: Պատմիր ինձ ուրեմն, իմ վաղեմի բարեկամ, պատմիր ուրեմն՝ երբ ձեր տունը շրջապատեցին, ձեզ կալանաւորեցին սպաները մւր տարան»:

Մի խորը մի քաշելով Խօջայ Սաքոն, ասաց.—«Այս ժամանակ, երբ մեղ շրջապատեցին մեղ սպաներով տարան Մսիս, Գայիմագամի մօտ, որ սկսեց իր բռնաւորական խստ հարց ու փորձը ...: Արդարանալու շատ իրաւացի փաստեր մէջ բերեցի, սակայն ի զուր էր, չարդարացայ ...»:

— է՛, շատ էլ որ արդար էինք, բայց որ ամուր բռնել էին, էլ հօ չէին արդարացնելու. ասաց եկուորներից մէկը:

— Գայմագամը մեղ բանտնշանակեց.—շարունակեց Խօջայ Սաքոն—և յանձնեց սպաների ձեռքը, որոնք մեղ կապածկապած տարան ուղիղ «Շահի-Մարան»<sup>1</sup> բերդում բանտարկեցին: Այստեղ մնացինք մօտ տաս տարի, ուր և ծնուեց այս աղջիկը, որ բերդի անունովն էլ կանչում ենք Շահ-Մարան:—Շահի-Մարանում գուցէ դեռ երկար կմսայինք, եթէ Աստուած չը յաջողէր մեզ:

— ի՞նչպէս յաջողուեց ձեզ:

— Մեզ մօտ բանդարկուածներ շատ կային, որոնց թւումն էր Գրմօն, գուք էլ կյիշէք, տէր իմ, թէ նա որքան ճարպիկ ու հմուտ է պարսպահատութեան մէջ. տեսաւ որ այլ ևս փրկութեան յոյս չունենք, սկսեց իր հնարագիտութիւնը բոլորիս ազատելու նկատմամբ, և ճիշտ որ մի գիշեր մեր առաջ ազատ ճանապարհ բաց արեց, որով ազատուելով տաժանակիր բանտից՝ անյայտացանք: Ահա մեր կրած տառապալից արկածները»:

— է՛հ, ոչինչ չկայ, թանկագին ընկեր, Համբերութիւնը կեանք է, ասաց Պապը. փառք տուր Աստծուն, որ այդքան արկածներ կրելուց յետոյ դեռ կինդանի կաք. փառք տուր նրան, որ այսուհետեւ հանգիստ կվային այս այդքան արկածները»:

1. Տես Սիրուան. էջ 251. «Նշանաւոր տեղի այժմ ի սահմանս Մասայ՝ թէ և աւերակ, է բերդն Զահի-մարան կամ Երևան գալեսի, զի երկոքին զնոյն նշտակեն օձից բերդ կամ արքայ օձից» Հ. Ալեքան:

### ԳԼՈՒԽ Բ.

Շահմարանի ծրագր.

Մայիս ամիսն էր: Օրը գեղեցիկ, օդը թարմ ու զովար. ծառերն ու թփերը կանաչին էին տալիս: Որտեղ ոտք էիր զցում, կանաչ խոտի, ծաղկի ու թփի վրայ էր ընկնում: Սոխակ-սարեակ և ուրիշ շատ թռչուններ իրանց ճռողիւնով ներդաշնակ երգում էին իրանց դայլայլիկը. մի խօսքով այդ հոգեղմայլ չնաշխարհիկ բոլքում մարդուս հոգին փառաւորւում էր, և ամեն մի մահկանացուի միտք ու հոգին այդ տեսարանի վսեմութեամբ զմայլուած՝ բարձրանում էր վեր շատ վեր, սաւառնում էր երկնային եթերի մէջ, և խորհելով ու կշռադատելով Վերին Տեսչութեան կարգադրութիւնը, առ ոչինչ էր համարում այս ամեն տեսակ բարիքները, որ վայելում էր նա: Հինց այդ իսկ չնաշխարհիկ վայրկենում Ասւանը մտածմանց մէջ խորասուզուած՝ շրջում էր անդուկ կերպով և ինքն իրան ասում.՝ «Ես, որ այսչափ սիրում եմ նրան, արդեօք նա էլ ինձ սիրում է թէ ոչ. ես, որ այսչափ մտածանջուում եմ նրա համար, արդեօք նա էլ ինձ միտ բերում է թէ ոչ. ես, որ յաճախակի նրա ուրուականի հետ խօսուում եմ որպէս իրական աշխարհի, արդեօք զգալի՞ է նրան, նա էլ ինձ երազում է թէ ոչ. ով գիտէ և գուցէ անունն անդամ նրա մտքով չի անցնում, որ ես իրան սիրում եմ անկեղծօրէն»: Ահա այդպէս մտածանջուուծ, որ ու գիշեր չնասկանալով թափառում էր Դալվորիկի փողոցներում: Մի ներքին ոյժ ձգել բերել էր նրան այդտեղ. և մինչ չէր հասկանում, թէ ուր է գտնուում ինքը, յանկարծ Խօջայ Սաքոյի տան պատուհանից մի փոքրիկ ծրար մեղմօրէն ցած ընկաւ նրա զլիխին:

Ասլանը սարսափեց, սարսուռ զգաց. կարծեց թէ երազ է: Քիչ էր մնում, որ գետին գլորուեր: Վայրկենաբար ցնցուեց. սակայն ուշքի գալով նայեց չորս կողմը: Ոչ ոք չկար. բայց երբ նայեց գէպի վեր, տեսաւ, որ տհա մի չքնաղագեղ օրիորդ զլուխը լուսամուտից հանած՝ իր հրապուրիչ հայեացքով նայում էր իրան, առա խոյս տալով լուսամուտից հեռացաւ: Դա Շահմարանն էր, որին անապական սիրով սիրում էր Ասլանը: Վերջինս ուշքի գալով, զետնից վեր առաւ ցած ընկաւ

ծրաբը, բացեց և կարդաց հետևեալը.—«Ասլան, եթէ դու սիրում ես ինձ, ընդունիր, որ ահա, նուիրում եմ քեզ ազատագրական սուրբ ուխտը. ընդունիր ուրեմն և տեղ տուր քո արիական թարմ կրծքիդ տակ և վստահաբար ընթացիր այդ ճանապարհով, որ տանում է դէպի լուսաւոր աշխարհը, դէպի բարի և առաքինի կեանքն, ընդունիր ուրեմն այդ դրոշը և առանց երկմաելու ամուր պահիր, ես քեզ հետ եմ, որոնհետև սրտանց սիրում եմ քեզ: Եթէ մեր սէրը լինէր անկեղծ, հաւատացած եղիր, որ ոչ ոք չի կարող մեղ նման երջանիկ համարուել աշխարհում»: Ասլանը չէր հաւատում այդ իրողութեանը. նա երազ էր համարում և իր կողքերին յաճախ հարուածելով կամենում էր սթափուել. սակայն իրողութիւն էր և ոչ ցնորք. միայն ուրախ բոպէն էր նրան այն աստիճան շփոթել, որ չէր կարող իրականը տարբերել երևակայականից: Նա կամենում էր հեռանալ այդտեղից. բայց ուրախ յուզմունքով տարուած, մի քանի քայլից յիտոյ կրկին յետ էր դառնում այնտեղ, ուր ստացել էր իր սիրելոյ պայմանատոմար: Նա յաճախ այդ տոմսը սեղմում էր իր բարախող կրծքին. Նա նոյն տեղում շատ պտոյա եկաւ, բայց սակաւ առ սակաւ ուշքի եկաւ, զգաց, տեսաւ թէ ինչ տեղումն է, հեռացաւ այնտեղից:

Սիրոյ ոյժը, հետզհետէ աւելի զօրեղանալով, մաշում էր նրանց սրաերը: Բայց նոքա ծածկում էին այդ սէրը ամենից, նմինչ որ բարերար ապագան կորոշէր: Զկար մէկը, որ հասկանար նրանց յարաբերութիւնը: Միայն Ասլանի մայրը, նկալակով այդ հարցը,

—Ասլան, որդի, այդ ի՞նչ է պատահել քեզ, որ հետզհետէ բարակում ու դեղնում ես:

—Մամօ, ոչինչ չի պատահել ինձ, միայն գլխացաւ է տուած եկել, որ մաշելով հոգիս տանջում է ինձ, պատասխանեց Ասլանը, երեալ շառագունած:

—Այդ գլխացաւի բան չէ՝ գաւակս, եկ դու խոստովանուիր՝ դարման տանեմ ցաւիր, ապա թէ ոչ՝ քո այդ անշակալ հիւանդութեամբ մեզ ես հետ գերեզման կը տանեմ:

—Այդ ի՞նչ էք ասում մամօ, միթէ ձեզ խաբում եմ ...:

—Այս, ես հաւատացած եմ որ խաբում ես, ասաց մայրը մի առանձին վրդովմունքով:

—Մի վրդովուիր մամօ, հաւատացած եղիր ...:

—Զեմ հաւատում.—ընդհատեց մայրը.—չեմ հաւատում, որովհետեւ քո տարածամ հալ ու մաշ լինելու, զեմքիդ դեղնուին ամեն մարդ նկատում է: Մի կողմ թողնելով ուրիշներինը, իմ նկատելով բոլորովին կերպարանափոխուել ես: Որդի, հաւատացած եղիր, որ եթէ այդ վաճանգաւոր հիւանդութիւնը մի քանի օր էլ այդպէս շարունակուի, այն ժամանակ գու այլ ևս չես փրկուի, և այն փայլուն օրերը, որ սպասում են քեզ ապագայում՝ իսպառ կանհետանան:

—Այդ ի՞նչ յանդիմանական խօսքեր էք ասում ինձ, մամօ, և գուր հաւատացած էք, որ ես գաղտնի հիւանդութիւն ունեմ ու չեմ համարձակում ձեղ յայտնել ... երբէք չհամոզուէք ձեր այդ թեր և դէմ կարծիքներին, որ իմ վերաբերմամբ բոլորովին անտեղի են ...:

—Ո՞չ ո՞չ.—ընդհատեց մայրը,—համոզուած եմ, որ գու խարում ես քո ծերացած մօրը, քո մօրը, որի միակ յոյսը գու ես, և բացի այդ քո յոյսովն է որ այս անապահով անտառում ապրում է մեր հօտը. բայց դու, ախ դու ...:

Մօր ձեռքը բանելով համբուրեց Ասլանը և սիրաց շահելով ասաց.—Մի վշտացիր, մամօ, Ասլանը գեռ կենդանի է. վրիժառութեան ձգտութիւնը գեռ նրա սրտում վառ են, գեռ չի մարել նրա վրէժինդրութեան եռանգը, գեռ բորբոքւնում են որպէս վառ կրակ. սակայն ի՞նչ վերաբերում է ձեր կարծիքներին, նրանք սխալ են. ուրեմն միամիտ եղէք, որ ես աւելի շուտ կառողջանայի, եթէ միայն նպատակս իրագործուէր ...:

—Ի՞նչ է քո նպատակը, որ չի իրադործում:

—Ո՞չինչ, ոչինչ մամօ, սխալուեցի:

Այս, որ ես ասում եմ խարում ես. ուրեմն մի ծածկիր, այլև ծածկելու կարիք չկայ. ասաւ, համարձակ տոս, միայն եթէ սիրում ես քո ծերացած ծնողներին. եթէ ոչ ...:

—Բաւական է, բաւական, մամօ խնդրում եմ թողէք այդ խօսքերը, իսկ այդ հարցի մասին յիտոյ կը խօսենք.—ապա սենեակից գուրս գալով, հեռացաւ Ասլանը:

Մայրը երկար մնաց անշարժ կանգնած. երկար մնաց մտատանջութեան մէջ, բայց յիտոյ գալով թորոս Պապի մօտ, պատմեց նրան այն ամենը՝ ի՞նչ որ խօսել էր որդու հետ: Թորոս, ասաց կինը.—«Մեզ մնում է մի բան անել այնքան գժուարին բան չէ՝ մենք կը կանչենք մեզ մօտ Ար-

շամին և կըպարտաւորացնենք նրան, որ ամեն ջանք գործ դնէ հասկանալու Ասլանի հիւանդութեան էական պատճառը. որովհետեւ նա թէ նրա ամենամտերիմ ընկերն է և թէ հմուտ է այդպիսիներից գաղտնիք դուրս կորզելու:

Գ Հ Ո Ւ Թ Գ.

Քիւրդերի աւազակուրիւնը:

Տասնեակ տարիներից յետոյ Դալվորիկի մարդաբնակութիւնը ստուարանալով ընդարձակուեց: Դալվորիկը, ինն թաղի բաժանեցին<sup>1</sup>. սակայն այդ ընդարձակութիւնն էլ երկար չըտեսեց, որովհետեւ ամեն կողմից անդադար գաղթում էին դէպի Սասուն:—Կիլիկիայից սկսած մինչև այն վայրերը, ուր անարդարութեան բեժիմը գործում էր, որբացեալ տարրը, հայ ժողովուրդը չդիմանալով, թողնում էր իր բնակութիւնը, տունը-տեղն ու հարստութեան միծ մասը, և ապաւինում թորոս պապի հովանաւորութեանը:

Թորոս պապը, որ վաղուց մտադիր էր իր նոր կազմակերպութիւնով այդ գաւառը աւելի շէնացնել, աւելի պայծառացնել, ժողովրդի այդ կուտակումը յարմար և հասուն համարելով, երեսնից աւելի գիւղեր հիմնեց և ժողովրդին վիճակով բաժանելով Դալվորիկից, բնակեցրեց նորաշէն գիւղերում<sup>2</sup>: Ներկայ Շէնիկն Ասլանն իր սիրունու պատճառաւ «Շէնլիկ» անուանեց, սակայն այժմ «Շէնլիկ»ը «Շէնիկ»ի է փոխուել:

1. Մինչ այժմ էլ Դալվորիկը ինն թաղ է, որոնց անուները, Սասունի Փարզայ զիւղի Յովհաննէս քահանայի թելադրածով հետեւալ. ներն են՝ Զարիր, Եղագաղ, Յարդը, Նօսնուգ, Սպղանք, Փուրիս, Եկըդուն, Հողինք, Հագմանք. Սատանի կարմնի միւս ափը՝ Ծփալիկ, Յարթխօ, Խովիթ:

2. Յովհաննէս քահ. Տէր Խաչատրեանի ասելով Սասունի այն շէն ու պայծառ գիւղերը յաճախ ասպատակութեան ենթակայ լինելով, քար ու քանդ են եղել, բացի հեաևեալները՝ Դալվորիկն իւր ինն թաղով, Ազպի, Քոփ, Քարմաւ, Ջէնիկ, Սէմալ, Ջունամերկ, չիտափնդ, Իրիցանք. Դեղաշէն, Գէյլէք-Գուղան, Խշխանձոր, Արտկունք, Ընկուզնակ, Սկիթ, Սաղդն, Քուրէս, Հեղին, Փառզայ, Արսըք, Դրէղողէ, Ցապլիկ, Դեալէրաշ և նորհան:

Ժողովրդի բաժանուելը Դալվորիկից շատ տխուր տպաւորութիւն էր թողնում մարդու վրայ: Ամենից ցաւալին այն էր, որ Շահմարանը, գիւղից բաժանուելով և բաժանուում էր Ասլանից, որին նուիրուել էր իր անկեղծ սիրովը: Սակայն նա առ աչօք էր բաժանուում և ոչ ի սրտէ. որովհետեւ նրանց սէրը հասարակ սէր չէր, այլ, բառիս բուն նշանակութեամբ անկեղծ: Մինչ Շահմարանն իր հրաժեշտն էր տալիս, յանկարծ աչքերը դարձրեց դեպի աջ, տեսաւ Ասլանին կանգնած մտատանջ, ձեռքերը ծալած կրծքին դրած, գլխարկը ծռած՝ աչքերին զցած, ախուր ու տրտում մտածմունքի մէջ խորասուզուած: Կարծես մի նախազգացում ստիպում էր նրան տիրել, և զլուխը քաշ զցած նայել գեանի երեսին. նայել այնպիսի յափշտակութեամբ, որ կարծես աւետարանի «Եւ վասն այսորիկ թողցէ այր զիայր և զմայր իւր և երթիցէ զիետ կնոջ իւրոյ»-ն լինէր կարգալիս. զժբաղդ ճակատագիրը: Շահմարանը ճնշում էր իր ընկմբուհիների ներկայութիւնից և դժուարանում էր իր մտքի զգացմունքները արտայայել իր հերոսին, բայց և այնպէս ճարը կտրած, պատրուակելով իր շըջապատողներին, ասաց.—Սիրելի ընկերունիներ, թէ սիրում էր, շուտ շուտ այցելեցէք ինձ, որովհետեւ ես ի սրտէ սիրում եմ ձեզ, և մեր սիրոյ վկայն թող լինի մեր ս. ուխտն. ես չեմ մոռանայ ձեզ՝ լինդ որում և դուք մնացէք հասատ ձեր սիրոյ մէջ: Ապա արտասուելով բաժանուեց շըջապատողներից:

Ասլանը լսեց, հասկացաւ, որ Շահմարանի խօսքն իրեն էր վերաբերում: Տատանուեց Ասլանը, երբ հեռացաւ Շահմարանը. նա չէր հանգստանում, նրա հանգստութեան միակ միջոցը մնում էր իր սիրելու տուած տոմսը, որը շուտ շուտ դուրս բերելով ծոցից պինդ պինդ սեղմում էր կուրծքին. բայց աւանդ, որ աւելի էր բորբոքւում նրա յուզմունքը և աւելի տանջում էր նրան ծրաբում գրուածքը: Մի բոպէ կանդ չէր առնում Ասլանը. նա շուարել էր, նա երբեմնակի խելազարի էր նմանուում, անհանգիստ հոգով թափառում էր:

Մի գիշեր խորին լուսութիւնը տիրել էր գիւղին. ամեն ինչ քնած էր. Ասլանի զոան առաջ խոմիում էր իր գամփուը: Կէս գիշերից անցել էր, բայց Ասլանը դեռ բաց աչքերով իր անկողնում պարկած մտատանջուում էր: Նա մերթ քնում, մերթ ծլունդ լինելով սթափուում էր, մի քա-

շում և էլի քնում: Վերջապէս մի ներքին միտք յափշտառ կեց նրա մաքուր հոգին: Ասլանը քնից. նա ընկաւ երեակայութեան աշխարհը: Նա մկնեց զառանցել. նրա մօտն էր Շահմարանի ուրուականը: Նորա կուռամ էին խաւարի դէմ. բայց մի օտար գէմք իր շան հետ յարձակում է Շահմարանի վրայ. և Ասլանը սաստիկ երկիւղից, որպէս իրականի բարձր ճշում է ու ուժգին գոռում:—Շահմարան, մի վախիր . . այ շուն, այ շուն, անիրաւ . . Ասլանն այնքան բարձր ու պարզ ձայնով արտասանեց այ շուն, որ իրանց գամփուր լսելով սարսափեց ու մկնեց բարձրաձայն հաջել:

Ասլանի այդ մաշող հիւանդութեան առաջն առնողը միայն իր հայրն էր, Թորոս Պապը, սակայն նա զբաղուած էր ժողովուրդը կազմակերպելով:—Նոր գիւղերի բարւոքման և բարեկաւելու գործին նուիրուած նա կարողացաւ կազմակերպել նոր գիւղերը, որոնցում առանձին առանձին կառավարիչներ նշանակեց, սրանց տեղական ժողովուրդը «ու է» անունն էր տալիս:

Ժողովուրդը գետեղուելով նոր գիւղերում, տարածուեց Սասնոյ լեռներն ու գաւառերը: Երկու հսկայ, քոյր ու եղբայր Ծովասարն ու Հանդոկն իրանց օժանդակ թեկերի տակն առած հայ գաւակներին, մատակարարում էին՝ մէկը մեղք ու կաթ, իսկ միւսը վարդ մանուշակ: Ժողովուրդը խաղաղ գործում էր:—Երկրագործն իր արօրական երգն ասելով արտն էր հերկում. հովիւն իր ոչխարի սուրուն առած լեռների կատարներում սրինգը նուագելով մեղմէկ եղանակում էր իր հովուական գրաւիչ երգը. համեստագէմ ու գեղաժայխ հարս ու աղջունք փարելով դէպ արուեստը, միշտ գործով էին զբաղուած,—մէկը մանում միւսը զգում և մէկը միւսի զաշնակցութեամբ գործում էին՝ մէկը գորդ, մէկը կապերտ, մէտոք մանուսան և այն, որոնց մասին յիշեցինք անցեալում: Շուտով բարբարս ցեղերն սկսեցին զանազան կողմերից ստկաւ առ ստկաւ երեան գալ և Սասնոյ շրջակայքում լեռների արտաքոյ մասերը բռնել: Ազա սկսեցին յաւանիսիք մուտք գործել Սասնոյ գիւղերը, ուր բազմատեսակ զրկանքներ և չարիքներ հասցնելով ճնունում էին: Հայ ժողովուրդը այդ սասպատակութեանց դէմ մկնեց պաշտպանողական գիրք բռնել: Սակայն ամեն կողմից ճնունած էր Հայը: Բայց Թորոս Պապը համբարութեամբ ու առաջանալով միանալում էր ամենը,

որպէսիս նա զիսէր, որ մի որեէ թշնամու հետ կոռւելու համար անհրաժեշտ է նախ՝ լաւ ճանաչել նրա ոյժերը և իմանալ թէ ինչ զէնքով է պատերազմում, որպէս զի ապա հնարաւոր լինի նրան դիմադրել: Իր հանգամանքներն ի նկատի ունենալով խոյս էր տալիս գալիք չարիքներից, ընդորում յաճախ խրատերով ասում էր:—«Համբերութիւնը կհանը է»:

## ԳԼՈՒԽ 2.

Ասլանի բազագործութիւնը.

Բազմանում են քիւրդերը:

Մթնածեռ գիշեր էր, ամպերի ետեկց տեղ տեղ աստղեր էին պլատում. իսկ քամին ծառերին տարուրերելով՝ մարմանդ խշացնում էր: Այդ ժամին ամեն ինչ խաղաղ քուն էին մտել միայն հեռուից մերթ ընդ մերթ լաւում էին շան խոնակ հաջոցներ: Կէս գիշերն արդէն անցել էր, մէկէն լսուեց, որ գոռում՝ գոչում էրն՝ հարա ա այ. տարան շան անսէք անութիւն, օգնութիւն. համէ է էք: Օգնութիւն կանչողները գիւղի գիշերապահներն էին, որ հանգիպում են մի անակնկալ գէպքի:—Մի խումբ քիւրդեր, շինակամների ոշխար, տաւարները զպանալով փախցնելիս են եղել, պատահամը հանդիպում են գիշերապահներին և սկսում են մահակամարտը. գիշերապահները շփոթուելով՝ վիրաւորւում են. իսկ քիւրդերն աւարը փախցնելով ասնում են: Հարայի ձայնից մի ակնթարթում ամբողջ գիւղում խրառումն ընկաւ, բոլորն արթնացան. կտրիճ երիտասարդները՝ որը նետով, որը սրով և որն էլ մահակով դուրս թափուեցան տներից, ձիով ու ոտքով արագ դիմեցին դէպի օգնութիւն աղազակող ձայնը: Ամենքն էլ հաւաքուեցան, շրջապատեցին գիշերապահներին և գէպքի իրողութիւնը հասկանալով, անմիջապէս հետամուտ եղան աւազակներին: Մինչ այդ Ասլանն արդէն կուռամ էր քիւրդերի հետ, երբ երիտասարդները միացան նրան ու սկսուից մի կատաղի կուրը:

Ասլանն իր նժոյգի վրայ նստած առիւծի պէս կուռում էր: Երկու քիւրդ սպանելով՝ նա անյայտացաւ մթութեան

մէջ, իսկ աւարները ընկերները յետ բերին, երբ գորքա յաղթութիւն տարած վերադառնում էին, Ասլանը ճանապարհից դուրս սպասում էր իմանալու նրանց կարծիքն իր քաջազորւթութեան մասին:

Ընկերներն ըուռն ոգեսրութեամբ, ցնծութեան երգեր ասելով սաստիկ ձիչ ու աղաղակով դալիս մօտենում են Ասլանին. Ասլանը ուզեց թագնունել նրանցից, որպէսզի աւելի լաւ, աւելի փորձնականապէս չափեր նրանց արիական ոյժն ու գիտակցութիւնը, սակայն ի գերեւ անցան. Պետոյի արիական գիտակցութիւնը ինքնարերաբար միշտ վառվուն էր. նրա աչքերից կրակ էր ցայտում, մըջիւնն անգամ չէր կարող վրիպել, նա դեռ չհասած Ասլանին նկատեց ինչ որ մի բան. ուժերը լարուեցան. նա կարծեց որ էլի քիւրդերից է և այդ նկատմամբ բարձր զոռաց.—Այդ ովլ է ... ձայն հանէք. շուտով ... շնուր, եթէ ոչ կործած էք ... Պետոն կհարուածէր նրան սրով. եթէ շուր չասէր թէ—ես եմ, ես. Ասլանն եմ:

Պետոն զարմանալով, ասաց.—Այ քո տունդ շէն, դէ մի շնուր ձայն հանէիր է ... կարծեցի թէ՝ հեռու քեզանից այն աւազակ շան ծնունդներիցն է. դեռ լաւ էր, որ շուր ձայն հանէցիր, եթէ ոչ ...:

—Շարունակիր, շարունակիր, եթէ ոչ ի՞նչ պիտի անէիր, ասաց Ասլանը:

—Ի՞նչ պիտի անէի՞ ... այն, ինչ որ հէնց հիմա արեցինք: Ասլա Պետոն Ասլանի վրայ զարմացած՝ հարցնում է:

—Խէր լինի, Ասլան, այս ամայի դաշտում ի՞նչ ես շինում:

—Խէր է, միայն սպասում էի ձեր յաջող վերադարձին, որ հանգիստ լինեմ. պահպանողական դիրք բռնելով շարունակեց Ասլանը:—Պետո, պատմիր ինձ այժմ՝ ի՞նչ եղան այն թշուառականներն, ուր մնացին, ... ազատեցիք, ինչ որ տարել էին, թէ՝ փախցրին:

—Փախցրին ... եթէ կարողանային ... պարձենալով ասաց Պետոն:

—Ի՞նչպէս եղաւ, որ չկարողացան:

—Ահա թէ ինչպէս,—երբ մենք խմբովին յարձակում գործեցինք, նրանց հալածեցինք և տարած աւարը երբ յետ էինք բերում, երկու սպանուած քիւրդ վեր լնկած տեսանք. աւարը յանձնեցինք Մկոյին այն ճանապարհով տա-

նելու տէրերին յանձնելու, իսկ ես եկայ այս ճանապարհով: Բայց չմոռանամ ասելու որ, Ասլան մի բան ինձ շատ դարձացրեց.—մինչև մեր համեմելը, մեղանից մէկը առաջ էր գնացել ու կռուելով հալածում էր քիւրդերին. սակայն երբ մենք հասանք և երբ սկսեցինք կռուել նա սայայտացաւ մթութեան մէջ. այնպէս որ, նրա ովլ լինելը մենք չկարողացանք իմասնալ. բայց իսկապէս ովլ էլ որ լինէր, այնուամենայնիւ այդ յաղթութութիւնը նրան է պատկանում իր արժանիքով:

—Պետո, ասաց հեղնելով Ասլանը. այն շների ատամնիքը արիւնոտել են, էլի կըգան:

—Ի՞նչ էք ատում, էն, ինչ որ կերան մեր Սասնեցինքըց, էլ կատաղէլ են որ մեր վայրը մտնել են ...

—Լաւ, լաւ. Պետո, շատ մի հրկարացնի.—վեհանձնանալով ասաց Ասլանը.—չինսի՞ դիւլն ես մտել կեանքդ ապահովուած ես կարծում, որ այդպէս միծ միծ բրդում ես ... զու այնպէս ես խօսում, որ կարծես այն շների անաստուած գործերին անծանօթ մի մարթ լինեմ:

—Միթէ չէր հաւաառում ինձ, Ասլան.—ասաց Պետոն կէս նեղացած:

—Հաւաառում եմ, սակայն, որ երկուսն էլ սպանել էք ...:

—Սպանուածները վեր լնկած են այնաեղ:

—Հա, հա, հա, —ծիծաղելով ասաց Ասլանը.—շատ լաւ էք արել, թողէք այնտեղ հէնց այնպէս էլ մնան. ... առաւօտեան մեր գամփները նրանցով մի փառաւոր ճաչ կունենան:

—Ի՞նչո՞ւ հեղնեցիք Ասլան, չինի այն կռուով դուք էիք:

—Այն, և ահա սպանուածների մասին վկայում է կարմրագոյն զաշոյնս. ասաց Ասլանը՝ ցոյց տալով Պետոյին արիւնոտ դաշոյնը:

Գլուխ Ե.

Ասլանի խոսովլանութիւնը.

Գարնանային եղանակ էր: Երկրագործ, մշակ, հովիտ հանդերձ շինականաց դասով արիացան, մըջիւնի նման տարածուել էին դաշտերի, լեռների կուրծք ու կատարները իրենց յարմար երգը դնդնալով—երգելով ասում էին այն-

քան ուրախ՝ որպէս թռչնիկ և այնքան մեղմ ու թարմ որպէս հարսունք: Վարդ, մանուշակ, սուսան և սումբուլ իրենց անուշ բուրմունքով ուշագրաւ էին անում ամենքին: Այդ եղանակը բնութեամբ այնքան գեղեցիկ ու գրաւիչ էր, որ մարդկային ազգն ու հոգին իր բնութեամբ դարձնելով՝ հոգեկան գուարծութիւն էր ընծայում մարդուն, որին յատուկ է վայելել Նախախնամութեան բնորոշած պարզեց: Մարդն առանց բնութեան, առանց զգացմունքի և պատուի՝ «Որպէս խոտոյ են աւուրք նորա»:

Եւ արդ՝ բնութեան, զգացմունքի և պատուի այդ պահանջը, դրական պահանջը, ազգեցիկ և գերբնական պահանջը այնքան ուժեղ ու բարձր է, որ իր մազնիսական զօրութեան ուժեղ թափով ամենազօրաւոր մարդուն անգամ իր վսիմութեամբ ձգելով՝ իրեն գերի է դարձնում, և ծառայցնում նրան՝ որքան ուզում է, ուղարկում՝ ուր որ ցանկանում է ինքը «բնութիւնը, զգացմունքն ու պատիւը»: — «Մարդ ի պատույ էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անանոց և անբանից»:

Տարուայ չորս եղանակներն իրանց բազմազան բնաւորութեամբ, մէկը միւսին յաջորդելով, թաւալզլոր եկան անցան և տուին մեղ ուրախ կենցաղական բիւր ծաղիկներով զարդարուած Համբարձման տօնը:

Արդ ինչպէս շատ տեղերում, Սանկցւոց մէջ ևս թագաւորում է այդ տօնի ծաղկաքաղի սովորութիւնը:

— Մամօ, ասաց Ասլանը. վաղը ծաղկաքաղ է ընկերներիս հետ գնալու եմ զուարձանալու:

— Ո՞րտեղ. — Հարցրեց մայրը:

— Մեր լեռները:

— Զի՞ կարելի ասել՝ ո՞ր լեռները:

— Կարելի է. — Մենք գնալու ենք Հանգոկայ լանջերը, Սնտիոր ճգնաւորի գերեզմանի վրայ ուխտ անելու:

— Եթէ դորա համար է, աղատ ես, կարող ես գնալ. միայն խոստացիր, որ այնտեղի գէպքերից ինձ պատմես:

— Այդ բարի է, սակայն թէ որքան յաջող կլինի գէպքը:

Առաւոտեան վաղ Ասլանը վեր կացաւ, հագաւ իր նոր հագուստը, ապա ընկերներին վերկացրեց և իւրաքանչիւրն իր ձին նստած ծաղկաքաղի գնացին:

Ասլանն իր սիրոյ յարաբերութեան մէջն էր:

Ծաղկաքաղ ժողովուրդը մինչեւ երեկոյ զրօննելով կանաչ ու ծաղկաւէտ մարդագետինների վրայ, ծաղկավնջերով յետ գարձան, որսնցից շատերը սպատրաստուեցան «Լէյլի—Մաջլումի» գրկախառնումն տեսնելուն<sup>1)</sup>:

Ասլանի տրամադրութիւնն ինքնարերաբար միշտ վառվըսուն էր, բայց նա վճռել էր ծածկուած պահել իր սէքը: Այդ նրա որդիիական համեստութեան հետևանքն էր, բայց չարոգինների գէմ յաճախ կոռւելով՝ նա երբեմ զառանցում էր: Սակայն այդ չարքաշ դրութիւնը երկարելով, դարձեալ տեղիք տուեց իր մօրը, որն աւելի հետաքրքրուելով՝ կրկին դիմեց թորոսին և ասաց.

1. Այդ տւանդութիւնը ոչ միայն Սասնոյ շուրջն, այլ և Արարատեցիք պատմւմ են, որ Համբարձման նախլնիաց երեկոյին «Լէյլի—Մաջլում» անուանի միմեանց քոյր աստղերն, որոց մէկը հիւսիսից իսկ միւսն հարաւից զալով և ողջունելով միմեանց՝ գրկախառնուում են: Այդ գրկախառնման վայրկենին գրկառնուում են երկրի բոլոր բուսականութիւնները. մինչեւ անգամ ամենաբարձր և հաստարուն կաղնիներն երկրպագութիւնն անելով միմեանց համբուրում են:

Հներումն, եղել են մարդիկ, որ այն գրկախառնումին, ինչ որ խնդրը բել են «Լէյլի—Մաջլութից», զրուել է իրենց: Այդ համոզմամբ նախապաշարուած ժողովուրդը, սկսած տան մեծից ու փոքրից նոտում են իրենց աննիիք վրայ և ժողովելով իրենց շարջը ահազին քանակութեամբ նայում են գէպի երկինք, «քոյր» աստղերի գրկախառնմանը, որպէսզի իրենց շարջը հաւաքած քարերը ոսկու կամ թէ մի այլ թանկապին իրերի փոխեն:

Մինչ այդ համոզմամբ տարիներով շարունակել են նստելը, բայց տարէնը մի բան, անձրե կամ փոթթը բարձրանալով խեղմ շինականների բոլոր յախերն էլ իրենց հետն են տարել: Եւ ահա ժողովուրդն ամենայն տարի այդպէս սպասելով Լէյլի—Մաջլութից գրկախառնումը տեսնելուն, սակայն տարեէնը մի անյաջողութիւն արգելք դառնալով գրկախառնումն անտեսանելի է մնացել, որով և նախապաշարումն ժողովուրդի միջից տարի յտարի սպասելով, այժմ գրեթէ վերջացել է:

Սանոյ ժողովուրդը յիշեալ աստղերի շնորհաբաշման մասին (ասում է Յովհաննէս քան.) մինչեւ այժմ էլ տառապելարաբ պատմում է, որ Սաղունում եղել է Գրօ Սարգսի տան մարգանցից մէկն, այդ երեկոյին երբ իր եղը յարգով բարձած ճանապարհորդելիս է լինում, տեսնում է վերցիշեալ աստղերի ողջոյններն իսկոյն յիշելով շնորհաբաշմութիւնն շփոթում է, որ պէտք է ասէր՝ «Ե՛ստուած զու բերը օսկի տաս ընձը», ասում է. — «Ե՛ստուած զու պիրը (գաւաղան) օսկի տաս ընձը», որ նոյն ժաման ձիռքի փայտը ոսկի է գտանում: Օսկի գաւաղանը իրըն թանկապին մի անօթ պինդ պահած են եղել, սակայն 1903 թ.-ի գէտքերին զիւզը թալանի ենթարկուելով, իմիջեն տանց գրանցուելու և սովորականը:



—Թորոս, ամեն բան մոռացմամբ է կորչում, առաւելապէս այն ժամանակ, երբ մարդ զանցառութեան է տալիս մի որ և է զործ. ինչպէս որ, ահա զանցառութեան տալով մոռացել ենք Արշամին կանչելը, յիշում ես, թէ ոչ ...:

—Այն Բանէ, յիշում եմ ... ձշմարիտ է, մոռացել եմ:

—Ուրեմն քանի շնուր է, քանի որ միտքդ է, մի մարդ ուղարկիր, կանչիր նրան այստեղ և պատուիրիր, ինչպէս որ գիտես:

—Զաւադ, Զաւադ! —ձայն տուեց ծառային թորոս Պապը. —Գնա և շուտով կանչիր ինձ մօտ Արշամին:

Զաւադը Արշամին գտնելով, շտապեցրեց նրան Պապի մօտ գալու:

Արշամը գալով թորոս Պապի մօտ, յարգանօք գլուխ տուեց և ձեռքերը ծալած կրծքին դրած լուռ ու մունջ կանգնեց, մինչեւ որ Պապը գնահատելով երիտասարդի անսահման խոնհութիւնը, հրաւիրեց նստել բազմոցի վրայ, ուր նստած էր և ինքը, որ անդադար ծխելով ղելլանն և կողմնակի զրոյց ներ անելով բացեց Ասլանի հարցը հետեւել խօսքերով.

—Արշամ, ես քեզ կանչել եմ մի շաա կարևոր գործի համար, որ հարկադրուած պէտք է շտապել առաջն առնելու. սիրելի Արշամ, դու պարտական ես ամեն ջանք գործ զնել և հասկանալ Ասլանի ուսուիչ հիւանդութեան պատճառն. իսկ իմանալուց յետոյ, անմիջապէս յայտնել ինձ:

—Շատ լաւ, Պապ! —պատասխանեց Արշամը. —Այդ իմ սրբազն պարտականութիւնը թող լինի. —ասաց և գլուխ տալով հեռացաւ:

Արշամը շրջելով փնտրում էր Ասլանին և երբ գտաւ ձեռքից բանելով ասաց. —Ասլան ինդիրեմ, գնանք փոքր ինչ զբոսնելու:

Ասլանը չըմերժեց, նա հետեւց Արշամին և սկսեցին զբոսնելով կողմնակի զրոյցներով զրադուել. բայց Արշամը չմոռանալով թորոս Պապի պատուէրը, խօսակցութեան յարմար տեղում տասց. —Ասլան, ճիշտ է, որ տառմ էիր հիւանդ եմ. ասա ինդրեմ, արդեօք ինչ է քո հիւանդութիւնը, որ այսօր երեկուանից աւելի գունատ ես, լաւ չես երեւում է:

1. Զաւադը քրդի ցեղից է, իսկ մայրը հայ, որի աղջիկ ժամանակում քիւրդերը յափշտակելով՝ քրդացրած են եղել, ուր և ծննդում Զաւադը բայց մայր մի հարմար ժամանակում տանելով որդուն փախնում է գալիս Սասուն:

—Ի՞նչպէս թէ լաւ չեմ երկում, ասաց Ասլանը երկիւղով պաշարուած:

—Այսինքն՝ զգալի կերպով նիհարել, գունատուել ես:

—Այն, նոյն բանը զգում եմ և ես. —համոզուելով ասաց Ասլանը —ասկայն ինչ անեմ, սիրելի ընկեր, այդ իմ թշուառ ճակատագիրն է, որի մի գիծն անդամ չի կարելի ջնջել:

—Ինձ հետաքրքիր է իմանալ այդ դժուարաջինջ գիծը:

—Բայց ուկսակել եմ չասել. —ասաց Ասլանը յամառած:

—Այդ ձեր իրաւունքն է, բայց յամենան գէպս պէտք է խոնարհուել Բնութեան օրէնքի առաջ: Յիշում ես Սուրբիկին, նա էլ սկզբում այդպէս էր խօսում. բայց որ նեղն ընկաւ խոստավանուեց: Եւ նա չէր առողջանայ եթէ չը խոստավանէր. այն ինչ էր նրա գրութիւնը, եթէ ոչ մի կմախք ...:

—Իրաւ, իրաւ, Արշամ, սպասիր. —ընդհատելով ասաց Ասլանը, —նոր յիշեցի Սուրբիկին, ինձ շատ հետաքնքիր է իմանալ թէ նա ինչով առողջացաւ, որ ինձանից աւելի վատթար գրութեան մէջ էր:

—Ի հարկ է, որ վատթար էր. նա բոլորովին կերպարանափոխուել էր. բայց երբ ես կամ միւսը սկսեցինք նրանով հետաքրքրուել խոստավանուեց և վտանգից աղատուեց:

—Բայց նա ինչ հիւանդութիւն ունէր:

—Մտաւոր հիւանդութիւն էր. ամուսնական ինդիր, մի հասարակ բան, որ ինձ խոստավանուելուց յետոյ, նպատակն իրագործուեց, փրկուեց նա իր ծանը տանջանքից: Եւ յիրաւի, Ասլան, եթէ այդպիսի ձգտում ունիս, ասիր ինձ, դու լաւ զիտես թէ որքան յաջող դեր եմ կատարում այդպիսի գործերում:

—Արշամ, —ասաց Ասլանը վստահելով Արշամի խօսքերին. —թէ սկզբունքով վճռել էի գաղտնի պահել այդ ամենից, սակայն որ ձշմարիտ ես ... ախ, ինչպէս տաեմ ...

—Թաքցնելու ոչ մի կարիք չկայ, որովհետեւ մարդիկ միշտ ենթակայ են Բնութեան պահանջներին:

—Ուրեմն Արշամ, բաց եմ անում քո առաջ իմ սրտի փականքները և ցոյց եմ տալիս այն թանկագին գաղտնիքը, որ չեմ փոխարինի այս մահկանացու աշխարհի ոչ մի փառքի հետ, որովհետեւ դա իմ երիտասարդական ոգուս ապագայ թագն ու պարմանքն է:

—Այսինքն. —հարցըց զարմացած Արշամը:

—Այսինքն որպէս Սուրբին էր.—հաղիւ թէ ասաց Առանը  
շառագունելով:

—Սուրբիը սիրահարուած էր, իսկ զ՞ու:

—Ես էլ նոյնպէս ....

—Բայց այժմ ասա—ընդհատեց Արշամը,—ուրիմն ավ  
է հրապուրել քեզ:

—Խօջայ Սաքոյի աղջիկը, Շահմարանը:

—Հասկացայ, բայց նա նոյն սիրով վերաբերում է  
դէպի քեզ:

—Այն, նա ինձ աւելի ջերմ սիրով է սիրում: (Ապա  
ցոյց տալով վաղմիմի տոմսը).—Ահա Արշամ, տես իմ սիրու  
հու կապած ուխտն, որ արել է ինձ հետ. միթէ սրան կա  
րելի՞ է մոռանալ ....

Արշամը կարդալով տոմսը, տեսաւ, որ ամեն բան կա  
տարեալ է. ապա ասաց.—Այդ մասին ևս կը խօսիմ Պապի  
հետ և յոյս ունեմ, որ նա աւելի ուրախ կլինի՝ քան զու:

Մինչ Թորոս Պապն ու Բանէն զանազան ենթադրական  
բացատրութիւններով էին զբաղուած Ապանի մասին, ահա  
ներս մտնելով Արշամը և գլուխ խոնարհելով կանգնեց: Թոր  
ոս Պապը նկատելով երիտասարդի ուրախ ժպիտը, ժպտա  
լով հարցրեց.—Հը՛, Արշամ, որ ևէ նորութիւն ունես:

—Այն, Պապ.—ասաց Արշամը դարձեալ ժպտալով:

—Ապա, պատմիր ինձ:

Արշամը պատմեց այն ամենն, ինչ որ լսել էր Առանից  
և որպէսզի գործն աւելի շուռ իրականանար, աւելացրեց  
ասելով—Պապ, ցանկալի կլինէր շուռ լուծել այդ խնդիրը,  
որովհետեւ նա ամեն ինչ սիրոյ ազդեցութեան տակ է գոր  
ծում. ահա ձեզ և իմ կարծիքը:

—Անշուշտ, անմիջապէս կըսկսենք մեր գործը. բայց  
ոլքան ուրախ եմ, որ իմ ժամանակակից ընկերոջ աղջիկն է.  
հետեապէս յաջող գործ կատարեցիր, ստացիր ուրեմն այս  
մատանին, որ նուիրում եմ քեզ իմ շնորհակալութեան փո  
խարէն:

Արշամը մատանին Պապից սահմանուց յետոյ, շնորհա  
կալութիւն յայտնելով գուրս զնաց: Նրան անհամբեր որտով  
սպասում էր Առանը, որ նկատելով Արշամի ժպիտը, ասաց.  
—Արշամ, ասա խնդրեմ, հայրս ինչ ասաց, ուրախ եղաւ:

Ի հարկէ, բայց աւելի նրա համար, որ խօջայ Սաքոյի

աղջիկն է և որպէսզի հաւատաս, որ ասածս իրականութիւն  
է, նայիր, տես այս մատանին. սա նուերեց ինձ Պապն իր  
շնորհակալութեան փոխարէն:

Առանի համար հարցը պարզուեց. Թորոս Պապի մէջ  
վառ մնաց Արշամի կարծիքն Առանի նկատմամբ. նա շտա  
պեց. խորհեց իր կին Բանէի հետ և մի քանի օրից յետոյ,  
կանչելով Արշամին ուղարկեց Շէնիկ:

Արշամը որպէս պատգամախօս, գնաց և յայտնեց Խօ  
ջայ Սաքոյին Թորոս պապի կամքը. Խօջան իր կողմից հա  
ճութիւն յայտնելով, ասաց.—Թող Վերին Տեսչութիւնն օրէնէ  
մեր բարեկամական սուրբ գործը: Իսկ զու, սիրելի Արշամ,  
կարող ես և մեր կողմից ներկայացուցիչ լինել և մեր սըր  
տանց հաճութիւնը յայտնել Թորոսին: Միենոյն ժամանակ,  
երբ կը ցանկանայ, կարող է բարեհաճել այստեղ կատարելու  
իր բուռն ցանկութիւնը: Արշամը տեսնելով Խօջայ Սաքոյի  
համաձայնութիւնը, հրաւիրեց իր մօտ Շահմարանին և ըն  
ծայեց Պապից նուէր ստացած մատանին, որպէս Պապի կող  
մից մի նշանաբան: Ապա հետեւեալ օրը լի յոյսերով՝ Շէնիկից  
Դալվորիկ վերադառնալով պատմեց Թորոս Պապին Խօջայ  
Սաքոյի բոլոր խօսակցութիւնները. իսկ Շահմարանի գո  
վեսան արեց հետեւեալ կերպով.

—Պապ, մեր հարսնացուն այնպէս ոև ու պայծառ աչքեր  
ունի, որ կընմանէ առաւօտեան բոցավառ աստղին, իսկ յօն  
քերը կարծես գրչագեղ նկար լինեն:—

Այնպէս բարակ ու գեղեցիկ քիթ ունի, որ կարծես մեղ  
րամոմից է ձուլուած:—

Այսերն այնքան կարմիր ու սպիտակ են, որ կընմանէ  
ձեան և արեան խառնուրդի, կարծես նլաթայ խնձոր են. իսկ  
շթունքներն բարակ, որպէս յակինթ թրաշ:—

Բերանն այնպիսի ատամներ ունի, որ կարծես մարգա  
րիտ լինեն. մաքուր է, որպէս մի սատաֆազարդ տաճար և  
մեղրի ու խնկան հոտ է բուրում. իսկ լեզուն այնպէս քաղ  
ցըրախօս ու գրաւիչ է, որ կընմանի Մասնոյ սարերի ըլրու  
ներին, երբ խօսում է, մարդ զմայլում է:—

Այնպէս երկար պարանոց ունի, որ կարծես սպիտակ  
սպի պարանոց է, իսկ կոկորդը նման է գեղին քարուբարի,  
որ ջուր խմելիս շողչողում է:—

Զեռքերն այնքան սպիտակ են ու փափուկ, որ կը նմանի  
սպիտակ խմորի:

Նրա մատները նմանում են գեղեցիկ փետուրէ զրչի,  
որ շարժելիս մը շիւնի շապիկ է կարում, որքան վրդովուած  
մարդ լինի, հենց նրան տեսնի խկոյն սիրտը կը հանգստանայ:

Այնքան բարակ մէջք ունի, որ կը նմանէ մարմարեայ  
սեան:

Նրա ծամերն այնքան սկ ու երկար են, որ կը նմանեն  
ապանոսի՝ հասնում են մինչեւ կրունկները:

Իսկ նրա կաքաւելով մանգալը կը նմանէ մեր լեռներու  
կաքաւների շորորելում, հասարակ մահկանացուն տեսնելիս  
խելքը գլխից վեր կը թռչի:

Վերջապէս, Պապ, նրա տեսքն այնքան գեղեցիկ ու  
գրաւիչ է, որ դժուարանում եմ նկարագրել. իսկ նրա խո-  
նարհութիւնն ու համեստութիւնն անպատճելի են, գուցէ  
և մեր Ասլանն էլ այնքան համեստութիւն չունենայ, որքան  
որ մեր հարսնացուն է:

—Այդքանն ինչպէս նկատեցիր.—Հարցրեց Թորոս Պապն  
ուրախացած:

—Մատանին նրան ընծայելու ժամանակ:

—Ուրեմն մատանին ընծայել ես հարսնացուին, հա:

—Այո, բայց միայն ձեր կողմից եմ նույիրել:

Շատ ապրիս, Արշամ. —ասացին բերկրանքով լցուած  
Թորոս Պապն ու Բանէն: —Մենք քեզ դարձեալ կը տանք մի  
ուրիշն, իսկ այդքան աշխատութեանդ համար կը վարձատրուես  
այլ բանով:

—Թորոս, —ասաց Բանէն, ուրեմն նշանադրութիւնն  
ու հարստանիքն երը է լինելու:

—Նշանադրութեւնը շուտ կը սկսենք, —ասաց Թորոսը, —  
հարստանիքն առանց զինու համ չունի և բացի այդ մեր գա-  
ւառացոց հարիւր ջորաբեռ զինին հազիւ կտեսնի, որ գա-  
ւառումս չի ճարուի: Ուստի ստիպուած հարստանիքը կը հե-  
տաձգուի հետևեալ տարի:

## Գ Լ Ռ Ի Խ Զ.

Խօջա Սաբոյի մահն եւ ինքնապատճեան միջոցներ:

Ամառն էր: Լեռ ու դաշտ, ծառ ու թռւփ, ծաղիկ ու  
ծաղկունք և ամենայն բուսական արարած իր երփներանգ  
գոյներով զարդարուած կենդանութիւն էին տալիս մայր  
լեռներին և անուշ բուրմունքով մարդկանց ուշքն ու հոգին  
դէպի իրենց դարձնելով՝ հրապուրում էին: Բնութեան այդ  
կենսական եղանակում, լեռնցին հիւրասիրուած լեռների  
կուրծք ու կատարների վրայ իր խայտախարիկ գառն ու  
մաքով, հորթն ու կովով ծաղկէ ծաղիկ թռչկոտելով, զուար-  
ձանում էր: Դա լեռնական կեանքի լրացուցիչն էր արդէն,  
որ կարծես բնութեան այդ կեանքից լեռները նոյն խակ ու-  
րախացած պար են գալիս:

Հսկայասիրտ ծիրենկատարն ու Հանդոկը մայրական  
կորովով տարածելով իրենց անաղարտ բազուկները, հիւրըն-  
կալել էին մարդկային ազգն և իրենց կենսունակ ստինքնե-  
րով սիրով կերակրում էին նրանց:

Լեռնցի այր ու կանայք իրենց հեռաւոր գիւղացոց հետ  
ջերմ յարաբերութեան մէջ էին: Ուրախ էր լեռնցին. նա  
կենցաղական կեանք էր անցկացնում լեռների այն կենսատու  
աղբրակների վրայ:

Սակայն ժողովրդի այդ ուրախ կենցաղն երկար չըտեղց  
և կարծես մի նախազգացում փոխեց նրանց դրամադրու-  
թիւնը: Փոխուեց և լեռնային բնութիւնը: —Սարերի ծաղ-  
կունքը թարշամեցին, այլ ևս անուշ հոտ չէին բուրում. խո-  
տաւէտ մարգագետինները կորցրեցին իրենց թարմութիւ-  
նը՝ ծերացել էին: Եւ ծերութեան հասու չէին միայն լեռնե-  
րըն իրենց երիտասարդ գագաթով, որ մարդկութեան ամառ-  
նային որբան էր, սակայն աւաղ, նոքա ևս փոխուեցին: Ամ-  
պերի քուլաները մերթ այս և մերթ այն սարի ու բլուրների  
գլխին ժողովուելով խտանում էին. կարծես բնութեան այն  
ուրախ, զարդարուն ու հրապուրիչ կեանքի մասին լինէին  
բանակցելիս: Դա նախազգացման լրացուցիչն էր:

Գիշերուայ կէմս էր: Լեռնցին լեռան զավիվայրում, -իր  
վրանում նիրհել էր, մէկ էլ տեսնես ստորերկրեայ խաւարի

միջից ճիշն ու աղաղակը բարձրացաւ:—Անօրէնները դարձեալ յարձակում են գործել, ասացին լուղներն: Աղաղակի ձայնը Շէնիկցոցն էր, ոմանց քիւրդերը վիրաւորելով, ոմանց կիսամեռ դրութեան հասցնելով՝ հեռանում են:

Գոռում—գոչումի ձայնից միւս օրաների կտրիճներն անմիջապէս զինուելով դուրս թափուեցին իրենց վրաններից, որը ոտով որն էլ ձիով հառաջանքի ձայնին հետևելով, օգնութեան հասան: Զըմուանամ ասելու, որ գրանց ամենին առաջնորդողն Ասլանն էր, որի առաջնորդութեամբ կայծակի պէս հասում են աւաղակներին, ուր ստորերկրեայ խաւարի մէջ տեղի ունեցաւ սոսկալի կոփւ: Շնորհիւ Ասլանի, աւաղակները փախուստ առնելով՝ թողնում են աւարն և անյայտանում:

Ասլանի մարտիկներն անվաս մնացին, բայց Ասլանի ուր պիրաւորուեց հրոսակախմբի մէջ յաճախ մանելուց, Վէրքը թէ այնքան էլ վտանգաւոր չէր, բայց և այսպէս նա մերթ ուրախ էր և մերթ տխուր: Ուրախ էր Շէնիկ գնալու համար:

Ասլանն աւելի տխրեց այն ժամանակ, երբ խմբովին հասնելով շէնիկցոց օրան, իջաւ իր աներոջ վրանը. և ի՞նչ է տեսնում նա:—Ահա, Խօջան վիրաւոր, կիսամեռ ընկած՝ լողում է արեան մէջ, իսկ ընտանիքն ողբեղական վիճակի մէջ: Շահմարանը լողում էր արցունքի ծովում.—մի կողմից՝ նրա կանացի սիրտը կծկծում էր իր վիրաւոր ծնողի չարաշար տանջուելուց, իսկ միւս կողմից՝ սուզն ու վիշտը, ան ու սարսափն որպէս չդժոխային չար ողբների պաշարել էին անարատ հոգին. մանաւանդ, երբ տեսնում էր իր տէր և արարիչ ծնողի մահը. տաղնապում էրնաւարեան անհռւն, անյատակ ծովում. նու ստէպ ստէպ սոսկում էր: Բայց առաւելապէս նրա ամբիջ սրտի վրայ աղդից Ասլանի վիրաւորումը. երբ տեսաւ, որ հրիտասարդների թերի վրայ բարձած, իջեցրին վրանում, Շահմարանի կուծքը ուժգին բարախեց. նա փոխուեց ուրիշ աշխարհ, բայց շուտ ուշքի բերին. նա ցանկանում էր հոգին աւանդել, սակայն աւանդ, որ իրաւունքն իրանը չէր:

Եւ ընտանեկան այդ թշուառ գրութիւնը յուզեց Ասլանի սիրտը և նա սկսեց գալ ու աղաղակել.—Մ'վ սիրոյ նուիրական, գեղամպիս րոպէներ, ինչու երջանկութիւն չէք գուշակում մանուկ հայերիս բաղդին, որ գեռ ևս նման են կոկոն վարդի, որ գեռ յետոյ բացուելով աւելի քան մեխակ-բալասան հոտ պիտի բուրեն աշխարհին:

Սակայն այդ ամեն ողբերգութիւններն իր մահուան տագնապում զգալով Խօջան՝ կանչեց Ասլանին, գրկեց ու կիսամեռ ձայնով ասաց.—Իմ սիրելի Ասլան, նրանք սովորական աւաղակներ չէին, այլ ինչպէս նկատեցի՝ եղեռնադրներ էին, որ կամենում էին Շահմարանին խլել ինձանից. սակայն ընդդիմանալով կը եցի այս հարուածը և ահա վէրքից մեռնում եմ. բայց վրէժինդրութիւնս թողնում եմ քեզ և այդ չմուսնալու համար՝ որպէս յուշարար թողնում եմ քեզ թշուառ, ապարանդ ընտանիքս, առաւելապէս փոքրիկ Զոմօյին, որ գեռ կարօտ է փայփայանքի: Զաւակս, Ասլան, ահա այժմէն իսկ կնքում եմ իմ մահկանացուն. աւանդ, էլ չեմ կարողանում խօսել. սակայն լաօ, Ասլան մըր տռւն, մըր ազգպէս, մըր բրր Վամթան ա ան....:

Թորոս պապն ի նկատի ունենալով քիւրդերի վայրագութիւններն՝ ինքնապահանութեան միջոց ձեռք առաւ:—Նա սուրհանդակներ ուղարկեց գաւառացոց «օբանին» ու գիւղեռը և պատուիրեց որ բոլորն էլ ամրանան իրենց գիւղերում, ասելով թէ՝—մինչև որ կը մտածենք: Եւ միտամանակ Զաւակի միջոցաւ պատուիրեց թամուրին, որը թափառական ցեղերի «էլաղասի»-ն էր համարւում, իր ցեղի և ցեղակեց ազգերի անկարգութիւնների առաջն առնի: Սակայն Զաւակը քիւրդական ծաղումն ունենալով յաւակնեց, իր տիրոջ պատուէրն ի չարը գործ դնելով՝ հայերի նախապատրաստութիւնների մասին ոտնագութիւններ արեց և միենոյն ժամանակ գեղեցիկ կերպով նկարագրեց Շահմարանի չնաշխարհիկ գեղեցկութիւնն թամուրի առաջ, որը խոստացաւ Զաւակին և ասաց.—Հաղար գլուխ ոչխար և հարիւր գլուխ տաւար կտամ քեզ եթէ նրան յափշտակես և ինձ հասցնես:

Զաւակը յանձն առնելով այդ առաջարկը՝ թամուրի ձեռքն ամուր սեղմելով հեռացաւ, որից անմիջապէս յետոյ թշնամիք առաջ խաղալով՝ ըսնեցին բոլոր հովիտները և սաստկացըն վայրագութիւնները:

Զաւակը որպէս սուրհանդակի շարունակ Պապի մօտն էր լինում. իսկ ժողովուրդը ծառայի այդ աստիճան ապերախտութեան մասին անգիտակից լինելով՝ յաճախ ժողովւում էր Պապի մօտ և իրերի գրութեան մասին խորհում:

Խորհրդական ժամերից մէկում, յուղուած ներս մտաւ

Կըմէ Հմգէն և ասաց.—Պապ, մեր թշնամին առաջ խաղալով գրաւեց մեր հովիտներն. ուստի մեր Վաթամնն ազատ պահելու համար, հրահանդեցէք մեր լեռնցոց այստեղ ժողովունելու. մենք յուսով ենք, որ Պապ հասարակապետի հրահանդը արձագանք կըդտնէ և այն ժամանակ մենք միացեալ ուժով կըհածենք այն թափառական ցեղերին, որոնք այդչափ ան ու սարսափ են ձգել մեր սրտերում:

—Այս, այս, գոչեցին ժողովականները:

—Եւ քանի լոենք.—Չարունակեց կըմէ Հմգէն—նոքա կընեղն, որովհետեւ նոքա անյադ են, ծալաւի են անմեղ արեան, նրանց անհրաժեշտ էցոյց տալ մեր արիական ուժը. ապա թէ ոչ, յաւիտեան կորած կըլինինք. որովհետեւ ես նրանց տեսայ կըճտուն ատամներով բերանները փրփրուած, և բոցավառ կրակն աչքերից թափելով սպաննում էին ինձ, որից արդէն երեսում էին աւերի և արհաւերքի սոսկալի պատկերը:

—Յառաջ, յառաջ խաղանք. բղաւեցին դարձեալ ժողովականները:

Պապը ընդհատեց բոլորին և ասաց.—Համբերութիւնը կեանք է, ինչ էք շտապում: Իսկ գու, կըմէ Հմգէ, տակաւին յուգուած ես, փոքր ինչ հանգստացիր և ապա կըլիսնինք:

Սակայն կըմէ Հմգէն, որ քսան տարեկան մի տաքարիւն երիտասարդ էր, չէր հանգստանում. նրա արիւնը եռ էր գալիս երակներում, նա յաճախ կըլիսում էր.—Վրէժ, վրէժ, ապա թէ չըկատարէք խնդիրս, հաւատացած եղէք, որ վաթանը ձեռքերից կըդնայ և որպէս մեր նախնիք իրենց թուլութեան պատճառով արժանացել են մեր նախատինքներին, այնպէս և մենք կենթարկուինք մեր ապագայ սերնդի անարդանքին: Սակայն, որպէսպի այդ անարդանքից ազատ մնանք և մեր յիշատակը յաւերժացրած լինենք, անհրաժեշտ են կատարել երիտասարդներիս խնդիրը, որով կազատուի մեր Վաթանը և կըյարատեի մեր գոյութիւնը. իսկ եթէ ոչ, նոքա այդպէս պարբերաբար առաջ խաղալով կիշխն մեզ: Վերջապէս շատ բան կարելի է սպասել, որոնց առաջն առնելու համար անհրաժեշտ են մեր յառաջ խաղացումներն: Ահա պապ, վերջացնում եմ խօսքս, որի վրայ պէտք է ձեր ուշադրութիւնը:

կըմէ Հմգէն դեռ իր խօսքերը նոր էր վերջացրել, ահա

ներս մտաւ Քլօ-Մկրէն, որին տեսնելով Պապը հարցրեց.—Զաւակս, այսօր դու ուր ես անյայտացել:

—Այդ ի՞նչ է ասում,—ասաց յուզուած Քլօ-Մկրէն,—մեր հովիտն անօթի էր մնացել, հաց տարայ Մերկերի գլուխն, այնտեղից կատաղի քիւրդերը յարձակուեցան վրաս, որ դուք ու անտեղի կերպով պիտի սպանէին: Բայց այդ ամեն խակ բաները որ լինում են հաւատացէք ձեր մեծերիդ երեսիցն է, որ մի օր մեր արմատն աշխարհից պիտ վերացնեն: Այլև բաւական է ձեր ձեռքից ... հերիք է:

—Զաւակս,—ընդհատելով Պապն ասաց.—այդ ի՞նչ է եղել գեռ համբերի ... այն ի՞նչ քուրդեր են եղել և հրտեղ պատահեցին:

—Մերկերն էր.—պատասխանեց Քլօ-Մկրէն.—որ միանում է Պապօ կտորին, ներքի հովտի գլուխն, հենց այն երկու բարակ շաղերու մօտ:—Այստեղից ես միամիտ անցնում էի, յանկարծ յետելից քար գլորուաւ. տեսայ որ բլերու (կաղնեայ մացառու անտառ) միջից ահազին քիւրդեր, կատաղի գաղանի նման թրերով, սրերով յետելից վազում են: Հաս է հաս եղան: Գլխիս մազերը կայնան, բիզ-բիզ եղան: Դարձայ վրաներն ուժգին գոռացի, որ փախչեն, բայց լպիրշ թափառականները չըփախան: Ճարս կտրուեց, կոացայ գետին, սկսեցի քարերով հալածել մինչև Սխտոր քարի վիզը, ուր հաղիւ աղատուեցայ:—Ի՞նչ էք հարցնում, այդ (փինուկ օռ) սրօրների բնակութիւններն այնքան ստուարացել են, որ մեր լեռների չորեք կողմը պաշարել են: Հօղինց գլուխը, որ Գանի-հասապ աղրիւրից վեր վեր կըզցի՛ եկել հասել են Մերկերու վիզը և այստեղից մէկ քանի բնակչութիւններ բարձրացել, հասել են մինչև Սխտոր քարի կաժը (բլուրը): Այդպէս, որ ամբողջ քարերը մեղնից լիեցին հա, այլ ևս մեզ ի՞նչ կարիք կայ այստեղ մնալու:

—Զաւակս, համբերիք, համբերիք,—ասաց մեղմաբար Պապը:

—Այլև կարիք չըկայ մեզ համբերելու:—կրկնեց բարկացած Քլօ-Մկրէն,—Ի՞նչ է այդքան ճնշում էք մեզ, մանգաղ է պէտք մանգաղ. ... եթէ ոչ, իմացած էղէք, որ այստեղի հողն ու ջուրը կանիծեմ, հարամ կանեմ, կըգնամ Հալէք այլ ևս չեմ վերադառնայ:

—Բայց համբերիք, համբերիք զաւակս, որովհետեւ ա-

պազման միշտ պսակում է այնպիսիների իգձերն, որոնք համբերող են: Հնդիս, սուրն ու թուրն այնքան չեն կարող քեզ վրկեր որքան համբերութիւնն, որի թելը տաճում է դէպի արդարութիւն, խղճի և ճշմարիտ վարդապետութեան կեդրում: Իսկ մեր նախնիք, որոնց մասին շշշակց Կըմէ-Հըմէնը: Ինչ անէին նոքա, քանի որ ժամանակակից պետութիւնները Հայոց կրօնափախութիւնը դարձրել էին մի հասարակ խաղալիք և իրենց մոլի վարմունքով մեր ազգութեան վրայ այնպիսի վէրքեր են բաց արել, որ սպիրակի գնելու համար կոխմաններ են հարկաւոր: Եւ որպէսպի հնդթակայ հարմար Աւետարանն ասում է՝ «Ո համբեկեսցէ իսպառ, նամար Աւետարանն ասում է՝ «Ո համբեկեսցէ իսպառ, նամար կեցցէ», իսկ մեր հաւերն՝ «Երկու չափի մէկ կարիք, երկու խորհիք մէկ խօսիք» և չէ որ՝ «Բզի գլուխն բռունցքով առաջ լինի»:

—Ել բաւական է պապ,—գոռզուացին ժողովականները. —այս քանիք երբորդ յարձակումներն են, մենք որին համբերենք:

—Սակայն ինչ արած. —ասաց Պապը. —Եթէ ոչ միայն համբերել, համբերել այնքան, մինչև ամենայն ինչ կատարեալ լինի: —Ճիշտ է, նկատում եմ, որ այդ անխիզճ բռնաւում մեր գլխին իր նախնեաց գերը խաղալով կամենում է կալը մեր գլխին իր նախնեաց գերը խաղալով կամենում է համբերել մինչև որ կատարելութեան ժամը գայ:

—Ո՛չ, ո՛չ,—գոռզուացին երիտասարդներն. —«Են վաղ էր, որ էշը կաղ էր», մենք այլ եւ երեխաներ չենք, մենք այժմ հականեր ենք, առիւծի պէս կըլապտառում նրանց. բայց միայն ձեր կամքը լինի, ասլա գուք կըտեսնէք թէ մենք ինչ կանենք նրանց:

—Ուրեմն, որ այդպէս է, —ասաց Պապը. —Հրահանգեցք բոլոր գաւառացիներին, որ առաջիկայ կիւրակի օրը թող փութան, գան Դալվորիկ խօսելիք ունեմ:

Զաւազն այդ ամենը լսելով հաղորդեց Ելաղասուն, որն աւելի խստացրեց յարձակումներն: Այդ ժամանակ բարձրացաւ ժողովրդի արդարութեան ձայնը, թնդաց, որոտաց մոլի վայրագութեան դէմ և ուժեղ թափով արձագանք գտնելով գաւառի բոլոր խաւերում մտիւց թորոս Պապի լայն աշխարհայեցողութիւնը, որին նա գետ ևս շուտ էր համա-

րում: Լեռնացին թողեց «համբերելին», և ասաց. —«աչքի տեղ աչքը հանենք, ատամի տեղ ատամը». և ճշմարտութեան շապիկ հաղնելով անբիծ պահենք մինչև մեր կեանքի վախճանը: Ուրեմն տղայք, դիմենք սարս ի վեր:

Խորհրդական ժամը հասել էր իր օրհասին:

Թորոս Պապի որոշած կիւրակի օրը եկաւ. ամբողջ գաւառացիք հաւաքուել էին Դալվորիկ: Եկեղեցու գաւթում տիւրում էր ժողովրդի մի հոծ բազմութիւն: Քահանան պատարագում էր, իսկ ժողովուրդը գրկաբաց, ձեռքերն երկինք բարձրացրած առ Աստուած էր աղադակում: Այդ ժամանակի Պապը յարմար համարելով լողինատեց ո. խորհրդոյ արարողութիւնը յառաջ բերեց Դեռնդ երէցի ճառը հեաւել խօսքուով:

—«Սիրելի ժողովուրդ, մեր Տէր Յիսուս Քրիստոսն իր մահով խափանեց մահու իշխանութիւնը: Եթէ մահը մեմում է մահով ուրեմն չըփախենանք, մենք ևս մասնակից լինենք Քրիստոսի մահին, որովհետեւ ում հետ որ մեռնինք՝ նրա հետ և կըկենանանաք: Զեր միտքը բերէք Մովսէս մարգարէին, որ տակաւին չըհասած այրութեան հասալին, նահատակութեան ո. խորհուրդը երևաց նրա մանկական հոգու մէջ. իր ժողովրդին փրկելու ժամանակ, միջնորդ գարձաւ նա երկնքի և երկրի մէջ: Նրա մէջ երբ զօրանում էր ո. խորհուրդը, իր ձեռքով վրէժինդիր էր լինում եղիպտացիներից: Եւ ո. նախանձից զրդուելով սպանեց եղիպտացուն և թաղեց աւազի մէջ: Այս պատճառով էլ Աստուած նրան մեծ անուն էր տալիս և կարգում էր ժողովրդին առաջնորդ:

—Եթէ Մովսէս մարգարէն այնքան հեռու ժամանակից վրէժինդիր էր լինում մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալըստեան համար. մենք, որ մեր աչքով տեսանք և վայելիցինք երկնաւոր առատ պարզեները, աւելի և պէտք է վրէժինդիր լինենք մեր տիրոջ արդար—ճշմարտութեան համար, որ իր անձը մահով զոհեց մեր մեղքերը փրկելու համար և արդարացրեց մեղ անտանելի դատապարտութիւնից: Ուրեմն զոհենք նոյնպէս և մեր անձն անմահ զօրութեան համար, որ առաջուայ վրէժինդիրներից պակաս չըգտնուինք թէ այստեղ աշխարհում, և թէ համդերձեալ կեանքուում»:

«Եղիայ մարգարէն նոյնպէս Աստուածայիս վրէժը պահնջելով Աքարի կուապաշտութիւնից՝ անըմբանելի հրեղէն

կառքով երկրից երկինք վերացաւ, սակայն ձեզ համար աւելի երանութիւն են պատրաստուած, ձեզ համար Աստուած թէև կառք չի ուղարկում, որ երկինքը վերանաք, այլ նոյն ինքն կառքերի Տէրը իր հզօր զօրութիւնով և հրեշտակներով ձեր առաջ գալով և հրեղին թերե բուացնելով ամենքիդ ուսին՝ երկինք պիտի վերանաք, որ ճանապարհորդակից և քաղաքակից լինեթ Նրան»:

Այդ ամենն էլ լսեց Զաւազը, խլամական արիւնը զրգուց նրա հոգին և բորբոքուած սրտով ինքն իրեն ասաց.—Ես ի բնէ իսլամի հարազատ զաւակներից լինիմ և դոքա լսելուց յետոց լում, իսլամի ուղղափառութիւնն արհամարողներին չըմատնեմ մահուան դատապարտութեան:—Այն, այն, ես չեմ լսելու, ես պիտի պարտազանց չըգտնուիմ նրա դէմ, պիտի պաշտպանեմ իմ ցեղը և այդ անելով հանդերձ պիտի մատնեմ այդ գեաւուրներին իմ ազգակից մուսուլմանների ձեռքը աւելի խիստ և դաժան կերպով, որպէսզի իմ հոգին չըկորչի, որ ես ևս տեղ ունենամ մեծ մարդարէ Մուհամմէտի երջանկաւէտ պարտիզում: Այդպէս մտածելով էլի անյայտացաւ, էլի գնաց լուրը հասցրեց Թամուրին:

### ԳԼՈՒԽ Է.

Ընդհարութեան ու Շահմարանի յափէտակումը:

Աւագակութեան հոսանքը գնալով աւելի զօրացաւ, ընդ որում հայերը յաճախ ենթակայ էին ասպատակութեան: Շենիկին վտանգ էր սպառնում:—Թամուրը Շահմարանին փախցնելու համար միշտ ահազին զօրքով շրջապատում էր Շենիկին, բայց յաղթուելով յետ էր նահանջում:

—Ահա հասաւ օրհասական ժամը, վեջապէս ասաց Պապը, որի «Համբերութեան» բաժակն, անշուշտ լցուել էր: Սակայն ի նկատի ունենալով իր ծերութիւնն՝ կառավարչական զեկը՝ յաձնեց Ասլանին և ասաց:—Սիրելի զաւակն, կեանքի դատնութիւններն ինչ ծերացնելով տանում է դէպի Գողգոթա, ուստի այլս չեմ կարող զործել այն, ինչ որ տարբինը առաջ էր, և իմ «Համբերութեան» կոչնակը, որ երկար տարբինը շարունակ դողանջելով ժողովրդի ականջին, դար-

թեցրեց իր դարաւոր քնից և հասունացնելով նըան՝ լոեց, այլև չի դողանջում: Եւ որովհետեւ ասուած է «Նման զնմանն սիրէ», ուստի ես էլ այսօրուանից քեզ օրհնելով, յանձնում եմ քեզ իմ տանութէրական իրաւունքները, որի մէջ անհրաժեշտ է ունենալ արդարասէրութեան և ձշմարտութեան ոգին: Ուստի իրեւ քաջի և իրեւ անձնութէր զինուորի յանձնում եմ քեզ վարչական իրաւունքներս և իմ արիսական քաջութիւնը, որպէսզի ազատ պահես մեր Վաթանն իրամի անարդ ոտնակութիւնից: Եւ ս. գործին պաշտպան հանդիսանալու համար, ահա տալիս եմ քեզ իմ պատանիկական այս ժանգուտած կեռ դաշոյնս, որ ի վաղուց յետէ ծարաւի է թշնամնաց արեան:

Ալանն Թորոս Պապի օրհնութիւնն ու վարչական իրաւունքներն սատնալուց անմիջապէս յետոյ ազատագրական մարտիբասութեան պլուզագանդայ մզեց գաւառացոց, որոնք իրենց մարտիկ ուժերով շուսով հաւաքուեցան և կազմակերպուելով մի մեծ բանակ կազմեցին, որոնց ազգականներն առանց սեպի խորութեան, անհամբեր սրտով սպասում էին նոր իշխանի հրանանդը լսելու, որ ահա երևան եկաւ նա իր թիկնապահներով հանդերձ և ամբիոն բարձրանալով ասաց հետեւեալը.

—Սիրելի հայր, դու որ մինչև այսօր «համբերութիւն» ես քարոզել, որով միիթթարել և կեանք ու ազգայնական ոգի ես ներշնչել մեր մէջ, սակայն այնչափ «Համբերութեանդ» համար էր, որ վերին նախախնամութիւնը պարածեց իր զօրեղ ձեւքը մեր վրայ, որով կատարեց քո կամքը և կատարեց նրա համար, որ մենք հասունանալով մեր անձը զոհենք իր սուրբ, ձշմարիտ իրաւունքները պաշտպանելու և անունը փառաւորելու: Այժմ հայր, ահա քո հարիւր տարուց ի վեր «Համբերութեանդ» պտուղներն ենք, որով շրջապատուել ես: Թէև առաջին անգամն է՝ ծանր է թուում մեզ բաժանուել մեր ծնողներից, որովհետեւ մեղանից շատերը գեռ ևս ծնողական փայփայանքի են կարօտ, սակայն մեզ շատ ցանկալի է, որ ձշմարիտ և սուրբ զործը պաշտպանելու համար կոուի դաշտ ենք դուրս գալիս, որի վիճակը մեզ համար անորոշ է և մութ մեր ճանապարհը, ոչ մի բան մեր աչքին այնքան պարզ չէ երկում, բայցի այն արիսական ուժից, որով շրջապատուած էք դուք: Թողղ ուրեմն քո քըլիսառնէական հաւատն ու կրօնը մեզ առաջնորդ ու փարոս լինի, իսկ ս. գործը, որի համար

պիտի զոհուինք՝ թող պահապան և զօրաւիդ հանդիսանայ անփորձ երիդասարդներիս:

Ապա դառնալով ժողովրդին ասում է. — Եւ դուք, յարգելի ժողովուրդ, որ ծերունազարդ Պապի հնոտ միասին միշտ առաջնորդել էք ձեր որդոց քրիստոնէական հաւատի մէջ և պահելով բաց արել մեր առաջ ձեր սրտի անցեալ վէրքերն, ահա նրան վրէժխնդիր լինելու համար պաշտպան են հանդիսանում ձեր մատող սերունդը, որոնք թէե անփորձ, բայց լի են արիական հոգով: Ուրեմն աղօթեցէք այս խորհրդաւոր ժամին, որ ձեր աշխատանքի պառւղներն արդինաւոր լինին, որպէսզի կարողանանք պաշտպան հանդիսանալ մեր ժողովրդին վերականգնելու նրա անունը: Եւ եթէ այդ յաջողութ մեզ, հաւատացած ենք անշուշտ, որ Աստուծոյ նախարինամող ձեռքն է հասել մեզ, որովհետև քրիստոնէական լոյս հաւատն է մեզ առաջնորդողը, որին և զոհուելու ցանկութիւն ունինք մենք և ուրախ ենք, որ նրա ձայնին ընդ միշտ պիտի հետևենք. թռալ այդ անխախտ ուխտի վկան լինեն մեր ս. նախնեաց անվախճան յիշատակութիւնը:

Եւ դուք մայրեր, որ չէք ինսայել ձեր օր ու զիշերուայ խաղաղ քունը, սնուցել էք մեղ ձեր ստիճաներով, որի հետ և ներշնչել էք մեր մէջ ազգայնական գաղտիար, չէք ինսայել ձեր մայրական խնամքը — ձեր սրատես աչքերով ազատել էք մեղ սրաթուիչ բաղէի ճիրաններից, ահաւասիկ, ձեր սնուցած, դաստիարակած և չարիքներից փրկած գաւակներդ, որով ըըրջապատուել էք դուք: Ուրեմն տուէք այժմ՝ ձեր մայրական սիրոյ վերջին համբոյըը, որին սիրում էք կաթոգին սիրով և իրեն հաստատութիւն ս. զործի, դուք ևս աղօթեցէք Աստըծուն, որ իր հովանի աջոյ զօրութիւնը մեր անփորձ երիտասարդներիս զօրաւիդ հանդիսանայ, որպէս զի յաղթող հանդիսանանք նրա ս. անունը փառաւորելու:

Իսկ դուք փափկասուն օրիորդներ, որ մինչև յարդ վայելում էիք ձեր մայրերի փաղաքանքը, սէրը, այժմ զոհելու էք և ձեր անդորրութիւնը, իսկ ձեր պատրաստած շերամի թելերից մեղ վիրակապեր պիտի հիւսէք, ապա վերահաս փորձական ժամերին առանց խուսափելու որ և է սպառնալիքից պիհնդ պիտի պահէք ձեր ի ընէ հարազատութիւնն, որ դուք ևս աջակից լինիք ս. զործին:

— Իսկ դուք, սիրելի գինակից ընկերներ, հաւատոյ վա-

հանն աւճրացրէք ձեր կրծքին և նետն ու ասպարը ուներիցդ կաթած, առաւտօտեան վաղ հաւաքուեցէք սարն ի վեր արշաւելու:

Գիշեր էր: Բոլոր աշխարհը խաղաղ ու անվարով քուն էր մաել բացի Ասլանից, որն անհամբերութեամբ սպասում էր արեկի ծագելուն: Այդ խորհրդական ժամում նա իր մէջ կենալը ընացնում էր բոլոր դիրքերն, գալիք պապան և ժողովրդի անելանելի դրութիւնը: Նա թէե չէր քնում, սակայն երկար մտածելուց յետոյ քնեց և այն բռպէական քնի մէջ տեսաւ իր սիրունու, Շահմարանի աստղը ցորալիս, որից սարսափելով քնից վեր ցատկեց: — Քա վատ նշան է, ասաց նա. — Բայց ինչու, երեկ այն աստղը կամենում է ինձ առաջնորդողի լինել, և ճանապարհ ցոյց տալու համար հէնց դէպի արևելք, գէպի թշնամնաց կողմերը ցորաց: Այն հաւատացած եմ, որ հէնց այդպէս էլ է, որ նա ինչպէս ուխտել է ինձ հետ, այնպէս էլ ցանկանում է զինակից լինել ինձ արեան գաշտում անգամ: Բայց աւագ, ցնորական մաքերը խարեցին Ասլանին, նա անփորձ էր, չէր հասկանում այն, ինչ որ ժամանակն է բուցնում ամեն բան:

Հետեւել օրը պայմանաժամն էր: Առաւտօտեան վաղ մի ակնթարթում բազմութիւնը կուտակուեց Թուրու Պապի գուռը, որոնք յաջողութիւն մաղթելով քաջերին ուղարկեց ծշմարտութեան ուղին:

Գիշեր էր արդէն, երբ Ասլանը արշաւելով հասել էր Հանգուկի բարձունքները: Փոքրիկ մարտիրոսական խումբն այդ տեղ իր հանդիսան առաւ: Կըմէ-Հըմզէն ու Քլօ-Մկրէն պահում էին արեկեան կողմը, արեմտեանը՝ Մզլօն ու Քրգոն, հիւսիսն ու հարաւը պահում էին՝ առիւծասիրտ Ասլանն ու Արշամը, իսկ Ճօոօ-Պետրոսն ու Հոստր-Տօնէն մէջ ընդ մէջ շնչելով հակում էին: Այսպէս զգուշութիւն պահելով լոյս հանդիցին երբ արշաւոյսը ծագեց արշաւեցին դէպի քիւրդերի նոր տիրապետած սահմանը: Այդ տեղ քրդական որ վրանին որ հանդիպում էր, բնաջինջ էր անում խումբը և կրկին յետ էր դառնում իր սահմանատեղը, Հանգուկի բարձունքը: Այդ լուրը շուտով լրտեսօրէն հասաւ Թամուրեին:

Գիշերային խորին լուսութիւնը տիրել էր աշխարհին, մարտիրոսական խումբն իր գիշերային հանդիսան էր առնում, քնել էր: Նիրհել էին և ծառ ու թուփ, թեթև հողմն ան-

գամ չէր խանգարում նրանց քունը, միայն այդ հսկողական ժամին, լեռների միջից լսում էին տարօրինակ և չարագուշակ ձայներ: Այդ խաղաղ գիշերը սարսափեցուցիչ էր մասնաւանդ նրանով, որ երկու չարագուշակ բուեր և պարբերաբար միմնանց ձայն էին տալիս, կարծես այդ գիշերուայ ահարկութիւնը լրացնելու համար, արդարև սիրելի ընթերցող այդպիսի մի գիշեր բուերի ձայնակցելով վայելը վատ գուշակութիւն է. խմբապահ կտրինարը մերթ սարսափում, մերթ ևս սրտապնդում էին, մանաւանդ նրանով, որ երբ տեսնում էին անվեհեր Ասլանին. սակայն այնուամենայնիւ այդ ահոելի ժամին, մանաւանդ այնպիսի անսապահով տեղում գտնուողի համար, հարկաւ երկիւղալի ու ահոելի կը ինի: Պահապանները շարունակ այս, այն կողմն էին նայում, մերթ ևս իրենց աշքերին չըհաւատարով, ականջները լրած ձայն էին պահում, որ չըլինի թէ թշնամին գաղտագողի յարձակումն գործի բանակի մէջ:

Կէս գիշերն արդէն բաւականին անցել էր, ամեն ձայն լռել էր. լռել էին նաև չարագուշակ բուերը, ամենայն ինչ խոր քնի մէջ էր ընկղմուել:

Մինչ պահապաններն այդպիսի մտածմունքով պաշարուել էին, որտեղից էր, այդ խոհրդաւոր ժամին յանկարծ ձիերի տրոփիւնի ձայնը զբանց ականջին հասաւ և այդ հսկողական ըուպէում, վարկենաբար խլատումն ընկաւ և մարտիրոսական բանակը իրաբանցուեց:—Ասլանը շվշոցով նշան տուեց իր օգնականներին, որ առանց մի որ և է ձայն կամ աղմուկ հանելու իրենց պատրաստութիւնները տեսնեն. իսկ ինքը չորս կտրինարի հետ անյայտացաւ մթութեան մէջ ինքնաւլու տրոփիւնի իրողութիւնը, սակայն գժբաղդաբար անցորդների հետքը կորցրեց, և անյօյ յետ էր զառնում բանակը, մէկ էլ լսուեց հեռուից կաչաղականման մի ճշգնդոց. այդ միշոցին Ասլանը կանդ առաւ, երկրորդուեց նոյն ձայնը.—Դա Զաւագն է. —ասաց զարմացած Ասլանը ընկերներին, իսկ ինքն իսկոյն սարեակի շվշոցով պատասխանեց. ապա մօտենալով նրան, ասաց:

—Խէր լինի Զաւագ, այստեղ ինչ ևս շինում:

—Խէր է իշխան, Պապից լուր եմ բերել:

—Ի՞նչ լուր, ասա տեսնեմ ինչ է, շնոր:

—Աշիրների պետը, թամուր էլ-աղաղակն:

—Ի՞նչ ի՞նչ, դեռ մէկ էլ ասիր ... Յիմար դու յանդուզն, ի՞նչպէս ևս համարձակում մի շան անուն այդքան մեծացնել, շնոր ասա շնոր. է, յետոյ. շարունակիր:

—Թամուր շունը դարձեալ մարդ էր ուղարկել Պապի մօտ և ասել թէ՝ պատրաստուեցէք որ պատերազմելու հմ ձեզ հետ:

—Հինց այդ, էլ ուրիշ բան:

—Էլ ուրիշ ոչինչ:

—Տես, տես այն գամիոն, թէ ի՞նչ է հաջել: Մէկը լինի ասող թէ՝ էլ ի՞նչ պատերազմ այ թշուառական: միթէ պատերազմը զբանից աւելի է,—դառնալով ընկերներին.—տղայք, ով գիտէ, գուցէ այդ թշուառականը մեր արիական ոյժը չի տեսել և կամ գուցէ մինչեւ այժմ չի էլ լսել մեր քաջութեան անունը, որ մեզ կամեցել է իմաց տալ:—Դաւնալով կը կին Զաւագին ասաց.—Այ տղայ, բաս Պապն ի՞նչ պատասխանեց:

—Ի՞նչ պատասխանելն ինձ յայտնի չէ, իշխան, միայն ուղարկեց ձերդ մեծափառութեանդ մօտ հաղորդելու ձեզ այդ յանդուզն լուրը, որպէսզի ձեր պատրաստութիւնը նախապէս տեսած լինէք:

—Շատ լաւ, բայց դեռ այդ մի կողմ մնայ, միայն այն ասա, դու այդ կողմերում մարդու չըպատահեցիր:

—Ո՛չ, իշխան:

—Ճանապարհորդ, մարդ, բան:

—Ո՛չ, ոչ ևս ոչ մի բան էլ չեմ տեսել:

—Որ այդպէս է, Զաւագ էլ մի սպասիր, գնա և շուտ տով ասա Պապին, որ մենք մեր պատրաստութիւնն ունինք, մեր կողմից միամիտ և անհոգ եղէք որ չենք յաղթուի, դուք միայն խորհեցէք գաւառի մասին, որ մի գուցէ թշնամին գաղտագողի յարձակում գործէ և մենք չիմանալով հասնի իր նպատակին:—Ուրեմն զգուշութիւն է պէտք տղայք, ասաց Ասլանը ընկերներին,—որ մի գուցէ նրանք լրտեսներ լինէին, որոնք կարող են լրտեսելով յարձակում գործել մեր կամ գիւղերի վրայ:

—Այս, այս, իշխան, հաւանական է, —վրայ բերեցին Քլօ-Մէկըն և ուրիշները:

—Դէք, որ այդպէս է պատրաստուեցէք, բայց ամենից առաջ հարկաւոր է գիւղերը պաշտպանել, որ մի գուցէ այն թշուառականը յարմար համարելով գաւառիս անպաշտպա-

Նութիւնը, համգամանքից օգտուելով, թափի իր թոյնը մեր գլխին, դէհ, Արշամ, ուրեմն պատրաստուենք զնողու, բայց աւելի շուտ Շէնիկի կողմն, որտեղից յարձակումն յաճախ է պատահում:

Առաւոտ էր, որ մարտիրոսական խումբը հասել էր գիւղերի շրջակայքը: Գիւղերի գիւրքը հեռուից խաղաղ էր երևում նկատեցին նոքա և աշխաղ, որտեղից երևում էին գիւղերը, բանակ կազմեցին ու փոքր ինչ հանգստանալուց յետոյ, Աւլանն ասաց հետեւալը.

—Միրելի աջակիցներ, մեր նպատակը միայն այն չէ, որ արիւն ենք թափում և գիւղեր աւելում, այլ այն, որ անարշարութեան դէմ արդարութիւն և անիրաւութեան դէմ՝ իրաւացիւթիւն պաշտպանելն է, որի համար իսկ գիւղազն Պատը այսքան տարի «համրերել» էր քարոզում. սակայն այժմ այն համրերութեան բաժակն արդէն լիցուել է, ոչտք է գատարել և ահա փառք Աստուծոյ ոչ պակաս գիր կարող ենք կատարել, քան մեր թշնամին: Ուրեմն ընկերներ, մեր հաւատոյ ուրբ դաւանանքը թող անջնջելի մնան ձեր սրտում և արթական հոգով զինուած, ովք ու սիրտ առած այդ իրաւուքը պաշտպանենք, որպէսզի այդպիսով կտրողանանք Նրա արժանի զինուորը կոչուի:

—Պատրաստ ենք զոհուելու մեր և հաւատի համար: Պատասխանեց խումբը միաբերան:

—Ուրեմն դիմենք սարն ի վեր, ասաց Անլունը վստահարար:

—Դիշերուայ մեռմիւթիւնը տիրել էր աշխարհին, երբ այդ խումբը հասել էր մի չարագուշակ գիւղի: Այդ խումբն այնպէս զաղտափողի ներս ընկաւ գիւղի մէջ, որ չներն անգամ չիմացան: Գիւղի անցերը իտակեցին: Կոռուղներն Աւլանից միայն չնշեցէք լսեցին, էլ չիմացան ինչ են զործում ստորերկրեայ մթութեան մէջ, միտք վայնասունի և խուլ յառաջաների հեծկլտոցներ էին լսում, և հետեւալ օրը ոչ մի կենդանի մարդ չկար, բայց մի քանի շուն ու կատուից, որոնք պատհաբար պատառուում էին գիւղները:

· Քանի զնում սաստկանում էր ընդհարութիւնը: Թամուրն ստէպ իմանալով Ասլանի արշաւանքը, ինքն ևս հաղարից աւելի մարդով գուրս եկաւ նրա դէմ:

Կոիւը սարսափելի էր, պատերազմի կերպարանք ստա-

ցաւ. երկու կողմից էլ «յաղթութիւն, յաղթութիւն» էին գոռում: Բաջասիրտ պատանի Ասլանը չէր զլանում իրախուսելու իր քաջերին. իսկ ինքը յաճախ մտնելով աշխաների կմիերի մէջ իր սրով ցիր ու ցան էր անում նրանց: Պակաս դեր չէին կատարում և Ասլանի միւս ընկերները, որոնք մտարելով աւազակների վերջին ծայր չարփներն, բարձրաձայն գոռում էին.— չնչեցէք աշխարհից Աշիր անունը, թող կորչի յաւիտեան:

Կոռուի յաղթութիւնը Ասլանի կողմն էր, որը վստահութեամբ առաջ էր ընթանում և ջարդելով հալածում քիւրդերին, որոնց բին-բաշիները վերջապէս ուշքի գալով նկատեցին, որ մի կողմից՝ Թամուրը չի երևում կոռուի մէջ, միւս կողմից էլ իրենք ջարդուելով յաղթուում են, սարսափահարուած փախուատ տան:

Ասլանը տեսնելով թշնամիների փախուատը, աւելի ողեւորուեց. նրա մէջ շարժուեց հայրենասիրական ոգին, յուգուեց և աշքերից կայծակի շանթեր թափելով, վրայ հասաւ, սպանեց, հալածեց բին-բաշիներին, որոնք անհովիւ ոչխարների նման այս ու այն կողմն էին փախչում, որ իբևնց գլուխը պատեսն, սպակայն հայերի կատաղի ճիբաններից ազատուելու ճար չը կար. փախչեն անհնարին էր, և գծուարին ապաստարան գտնելը: Ամեն կողմից ենթակայ էին մահուան վտանգի:

Գիշեր էր. լուսինն էլ իր աղօտ լուսով լուսաւորում էր տիեզերքը. գիշերային այդ պարզ ժամին, լուսնոյ թարմ լոյսի տակ Ասլանը յաղթութեան գրօշակ պարզեց Աշիրէթումք:

Լուս էր երկիրը, լուել էր և արիւնաբրու թշնամիաց ձայնը, վերջին խօսքով կարծես թէ այդ հանդ ու հանդաստանը, լեռն ու ձորը երբէք բնակութիւն չեն ունեցել: — Արդեօք ուր կորան, կամ ուր հալածուեցին, որ այլևս չեն երեւում,— ասաց Ասլանը շարունակելով,— բայց տղայք, մարդուս թշնամին միշտ արթուն է լինում, յամենայն դէպս անհոգ չըգանուէք, ամեն կերպ աշխատեցէք զգաստ լինելու, որ մի գուցէ թշնամին զալմոնի յարձակումն գործի:

Հետեւալ օքը Ասլանը շարունակեց կրկին առաջ զնաւ բայց բարեբաղգաբար և ոչ մի խոչնըդուի չըհանդիպելով սկըսեց յետ դասմաբ: Ապա յաղթութեան երգերով տուն վերադասն:

Ասլանի այդչափ ուրախ արամագրութիւնը երկար չը-

տեսեց և նրա տոկուն ջանքերը, որ գործ էր դնում արդարաշ-  
դատութեան համար, չնորհիւ Զաւադի բոլորն էլ խորտակուե-  
ցան, որովհետեւ նա Ասլանից բաժանուելով, որ լուր պիտի  
բերեր Պապին, փոխեց ճանապարհը դէպի Խութ և իրերի  
դրութիւնը պատմեց Թամուրին:

Կոռուի տասն և հինգերորդ օրն էր, ինչպէս որ վերն  
ասացինք, Թամուրն անյայտացել էր կոռուի դաշտից: Նա  
հայերի մասին ամեն բան Զաւադից իմանալուց յետոյ, պա-  
տուիրում է իր զօրքերին, որ գաղտնի կերպով հատ-հատ  
յետ քաշումն կոռուից, իբր նշան յաղթուելու. իսկ հայերին  
դէմ կենալու համար, հարկաւոր են զօրքի քառորդ մասը մի-  
այն. կոռուից յետ զարձողները թող հաւաքուեն Խութ՝ իր մօտ:

Այդ լուրը արձագանդ էր գտել քիւրդերի մէջ, շուտով  
հաւաքուելով յիշեալ զիւղում կազմում են մի զօրքաժողով:  
Թամուրը հրամաններ է տալիս նրանց, ասելով.—հայերի  
մեծագոյն մասն այսօր մեր դէմ պատերազմ է դուրս եկել-  
այժմ նրանց ամբողջ գաւառը իր զիւղերով հանդերձ մնել հա-  
մար մի պատրաստի կերակուր է, որն սպասում է մեր  
ախորժակին. ուրեմն առանց ժամանակ կորցնելու առաջ զը-  
նանք, և ով որ սիրում է մեր իսլամի սրբազն ուխտը, թող  
նա նրա համար առատ զոհեր պատրաստէ գեաւուրներից,  
որով իր համար փառաւոր տեղ պատրաստած կըլինի թէ այս-  
տեղ՝ աշխարհում է թէ երկնքում, մեծ մարզարէի ջաննաթում:

Կատաղի խուժանը միաձայն գոռաց.—Պատրաստ ենք  
զոհուելով զոհուելու մեր մեծ մարզարէի ս. ուխտին, որին  
չըսիրող մուսիլմանը, թող խորտակուի, անդնենդ իշնի:

Թամուրը տեսնելով, որ ամենքն էլ հաստատ են իրենց  
խոստման մէջ՝ առանց ժամանակ կորցնելու, ինքը նստեց  
իր ձին և ամբոխի գլուխն անցած Շէլի-Բզինի հետ ար-  
շաւեց Սասնոյ գաւառը, ուր և սկսեցին սոսկալի աւեր և  
արհաւերը:

Այդ բոթարեր լուրը կայծակի արագութեամբ հասաւ  
Թորոս Պապին. բայց ի՞նչ անէր այն ծերունին, երբ ամբողջ  
գաւառում բացի ծեր մարդուց, կանանցից ու փոքր երեխա-  
ներից, ոչ մի կոռուող ոյժ չկար: Ամբաղդ ծերունին որ կողմն որ  
գարձում էր իր միտքը, չէր յաջողւում. նրա միակ յոյսը  
մնացել էր Զաւադը, որին կանչելով, ասաց.—Զաւադ, որ-  
դիս, շուտափոյթ հասցրու այս աղէտի լուրը Ասլանին և ասա

իմ սիրելի որդուն, որքան կարող է թող շուտ յետ դառ-  
նայ գաւառը, թերեւ կարողանան այդ մոլեսանդների կա-  
տաղի հոսանքը դադարեցնել, եթէ ոչ, մենք մեծից սկսած մին-  
չև ամենափոքրը զո՞ կըդնանք սրանց անյագ սրերին:

Զաւադը բոպէ-բոպէ սպասում էր մի այդպիսէ ծառա-  
յութեան, որ իր չար զիտաւորութիւնը կատարէր և երբ լսեց,  
աստուորի չափով ուրախացաւ նա թէ մի ոտ ունէր՝ երկուսն  
էլ փոխ առաւ, շտապէց. ձին պատրաստեց, ծտի պէս թուաւ  
վրան նստեց և ասաց.—իսկապէս՝ «Պղտոր ջրում ձուկ  
կըբունեն»—և փոխանակ Ասլանին լուր տանելու, կոռուի  
դաշտ երթալու տեղ, ծոեց ճանապարհը դէպի Շէնիկ, որով-  
հետեւ դաւաճանական ողին նա ի բնէ ունէր, և սատանան  
նրա սրտում վաղուց էր բուն դրեւ, ուստի հանգամանքից  
օգտուելով, զնաց Շահմարանի տունը, որի մօրից հիւրասի-  
րուելով, սկսեց իր խարդախական խօսքերը, որը վաղուց  
պատրաստած ունէր՝ զրուցել անմեղ կնոջը: Նա պատրուա-  
կելով գաւառի խառն դրութիւնը, առաջ բերեց հետեւեալ  
խօսքերը.—Ասլանը կոռուի դաշտից ինձ ուղարկել է, որ Շահ-  
մարանին տանեմ իրենց տուն, որովհետեւ իրերի զրութիւնն  
անորոշ լինելով, գուցէ գերութեան մատնուէք, ուստի որպէս  
զի ապահով լինէք, գալիք չարիքներից անմասն մնաք պիտի  
հետեւէք իշխանի պատուէրին: Ուստի մայր Աննա, Շահմա-  
րանին անպայման պիտի տանեմ. իսկ եթէ կամք ունէք,  
դուք ևս հետեւեցէք մեղ:

Աննան միամիտ և մի բարի կին էր, որի համար էլ  
չը կարողացաւ լաւ հասկանալ սուրհանդակի խարդախական  
միտքը. մանաւանդ տեսնելով նրա գրական պահանջը՝ ակամա-  
յից յանձնեց նրան Շահմարանին:

Զաւադն սկզբում որոշել էր Շահմարանին յափշաակել  
Թամուրին յանձնելու, սակայն յոյժ հրապուրուելով Շահ-  
մարանի հրապուէչ գեղերկութիւնից՝ փոխեց իր միտքը  
և փոխելով նախկին ճանապարհը, դիմեց Արևելք:

Զաւադը հասաւ իր նպատակին ....

Հեռու աշխարհից, հեռու և Ասլանի աչքից ու մտքից,  
տանջելով տանում էր ապերախտ ծառան, տանում և հեռաց-  
նում էր իր վաթանից, Սասնոյ գաւառի չնաշխարհիկ թա-  
գուհի Շահմարանին ....

Գ Լ ՈՒ Խ Խ Ը Բ.

Թամուր էլ-աղասու ասպատակուրինն ու կալանաւորուիլը:

Դամնանք դէպի թամուր էլ-աղասին:

Թամուր էլ-աղասին, ինչպէս վերը յիշեցինք, խոյս տալով Ասլանից, խուռն խուժանով մի առանձին ճանապարհով մտել էր Սասնոյ գաւառն, ուր սոսկալի կոտորած ու աւելումներ էր անում:

Էլ ազատ գիւղ չըմնաց, որ պատահէին ու չաւիրէին, խոկ իրեղէնները, որոնք աչքի ընկնող մի բան էին, թալան էին անում: Ամբողջ գաւառացիք մահուան երկունքով պաշարուած, դողդողում էին: Ամենքին էլ վտանգ էր սպառնում: Թամուրի անողոք գերից բոնկում էին բարձրագագաթ Ծովասարն ու Հանգոկը, սակայն լուռ կերպով, որովհետեւ ապերախտ Զաւադը մեծ կափարիչ էր գրել նրանց բերանին:

Վտանգը սաստկանում էր և աւերիչ արշաւանքի հոսանքը մէկ զիւղից միւսն անցնելով աւելի բորբուռում էր: Ենիկն ու Սեմալը, որ ծվաւորուել էին Հանգոկի փեշերքի տակ, առագաստի կարմիր հալաւ հագան և այդ կարմրագոյն զիւստը փայլ տուեց գեղջուկ հայ կանանց, զրգուուեց նրանց հոգեկան լարերը, ոգեսրուեցան, հոգեսր սքեմ հագան կանայք, հարսունք, աղջկունք և հոգեսր զէնքով սպառազինուած, իրենց ծերացած այր ու հայրերի հետ մէկ տեղ գուըս եկան դաշտ, ընդդիմութեան ցոյցեր արին թամուրին, սակայն աւազ, ի զուր անցան Վաթանի այն ջերմ սիրոյ ջանքերը, կանացի քնքոյշ ուժերը Ջատուեցան, ծերուկ շինականները մատաղ երեխաների, հարս ու աղջիկների տապալումն տեսնելուց սարսափահար եղան, շատերը զոհ գնացին, և ոմանք իրենց հարս ու աղջիկների օգնութեամբ փախուստ առանելով, դիմեցին դէպի Դալվորիկ պաշտպանութիւն գտնելու:

Այդ ճգնաժամին թէ որպիսի աղիողորմ սոսկալի լաց ու կոծի, սուր ու ողբի հառաչանքներ էին բարձրանում դէպի երկինք, Ամենակալի աթոռը. այդ գրիչս չի գորում նկարագրել: Մի խօքով գժոխային մի կեանք, Բէթղեհեմեան ողբերգութիւն: Տեսարանը սրտաշարժ էր.—մարդկանցից որին կրօնափոխ էին անում, որին չարաչար մահով սպա-

նելով այլում էին, իսկ եղենագործութիւններին չափ ու սահման չկար:

Այդ սոսկալի բարբարոսութիւնից ազատուելը բաղդի էր մնում, այն էլ քչերին էր յաջողուում, որոնց թւում էր Շահմարանի եղբայր Զօմօն, որ Ասլանը թողել էր իր այրի մօրն ու Շահմարանին միսիթարելու համար: Զօմօն սոսկալի կոտորածից իր գլուխն ազատելու համար, առանց ի նկատի ունենալով մօր և քրոջ անապահով կեանքը, տանից փախչում էր. թէ դէպի ուր, այդ ինքն էլ չըգիտէր, սակայն բազդի բերմամբ հանդիպում է Ասլանի խմբին, որին տեսնելիս վազում է և արտասուքը աչքերին փաթթաթւում նրա պարանցով, ապա լացակումած պատմում է նրան գաւառի աղէտը:

Ասլանը փետից իր զիսի մաղերը, երր լսեց Զօմօնից բօթաբեր լուրը, ասաց ինքն իսկն՝ Տեսար՝ ինչ խաղացնամարա թամուրը: Ապա իր կրակոտ աչքերը դարձնելով գաւառի կողմն, ասաց. — Ով զինակիցներ, տեսնեմ էք մեր գաւառից բարձրացող այն ամպանման ծուխը. նրանք բոլորն էլ անմեղ զոհերի արիւններն են, որ անարդարութեան դէմ բողոքելու համար երկինք են վերանում, և ևս հաւատացած եմ, որ վերին Տեսչութիւնը լսելով այդ արդար բողոքը՝ պատմնի Զօմօնին իրը առաքեալի ուղարկից այդ լսելը մեղ յայտնելու: Դէս ընկերներ, կենարար խաչի օդութեամբ թէ առնենք, թունենք, և լարենք մեր ուժերն ու նրանց յետեկցը հասնենք, գաւառն ազատենք. եթէ ոչ էլ հարամ՝ կըլինի մեր ապրելն էս աշխարհում:

Արշաւախումբն առաջ ընթանալով, զիմեց դէպի գաւառը: Սակայն Գելից-գուզան ձորի բարձունքներով անցնելիս, նկատեցին, որ ահա թամուրն իր զօրքերի հետ իջել է ձորի յատակը, մեծ բանակ է կազմել: Զօրքերն ստորեկրեաց վէի մէջ այս ու այն կողմ թաշկուտելով զուարձանում էին և խոփշառում թալանած ոչխար ու տաւարների մաից պատրաստուած կերտակուրները: Այդ ամենը տեսնելով, Ասլանն ասաց խրնխտ ձայնով. — Ահա սոլայք, անմեղ արեան ժարաւրի խռամի լսիլիրշ զաւակները, որոնց կեանքն այժմ մեզնից է կախուած. զրանց խապառ ջնջելու համար մեր միքանի քարերն անգամ բաւական են, որ այդ ձորարաշից գլորենք դէպի յատակը:

Ասլանն իր խօնքը դեռ չըլիրջացրած, խումբը ցրիւ

եկաւ ձորի լաճները, փակեցին նախապէս փախնելու անցքերը  
և ապա քարեր էր, որ զլորում էին ձորի ստորերկրեայ յա-  
տակը, թշնամիք տեսնելով այդ անսպասելի իրողութիւնը՝  
ապշեցին, սկսեցին փախչել, բայց ի զուր էր, չէին ազատում:  
Գոռացին, գոչեցին և վրկութեան օգնութիւն էին կանչում  
թամուրին, բայց ով կըլսէր: Վատանգը արագ կերպով էր  
լութանում, իւրաքանչիւր գլորուող քարի թափը տանում  
էր իր հետ ահագին քանակութեամբ քարեր և այդ տեղա-  
ցող քարէ կարկուտից քարկոծ էին լինում ամենքը:

Ամբողջ չորս ժամ տեսեց այդ գործողութիւնը, որից յե-  
տոյ բոլոր հայերը միասին ժողովուած, խմբովին իշան ձորի  
յատակը, տեսնելու իրենց քաջակործութեան արդինքը:

Այդ միջոցին Ասլանի ուշադրութիւնը գրաւեց մի քարայր,  
որը գտնուում էր ձորի կրծքին. երբ լնկերներով բարձրացան  
խուզարկելու, նկատեցին, որ ահա մի ինչ որ բան է երևում  
չամկածաւոր քարայրում. իրողութիւնն ստուգելու համար Աս-  
անը հրմայեց իր հետ եղողներին, գաղ բերեն: Պատուէրը կա-  
ռարուեց՝ բաւականաչափ գաղ քաղեցին ու այրի մէջ մէծ  
խարոյէլ կազմելուց յետոյ, իրենք երկուստեփ կանգնեցին այրի  
դուանը. տասն ըռպէ չանցած, խարոյէլ չերմութիւնից ու գաղի  
մխից խեղդուած թամուրը և Շէյխ-Բղինն իրենց թիկնապա-  
հի հետ գուրս պլրծան այրից: Հայերը կալանաւորեցին ու մի-  
մեանց կապած, ծեծելով իջեցրին ձորի մէջ: Դրանց երևան  
գալուց յետոյ, հերոսները ստիպուած եղան խուզարկել ձորի  
միւս քարայրերն ես: Այդ միջոցին Ասլանի ականջին դիպաւ  
մի ծանօթ ձայն, և նա կանգ առաւ, երկրորդուեց նոյն ձայնը,  
որն առում էր.—Լաճ, Ասլան, մեզ լը աղատմէր....

—Տղայք, դարձէք դէպի այդ կողմը, —ասաց Ասլանն  
ընկերներին:

Ընկերները գաւանալով գտան ձայնի հետքը, բայց ինչ  
են տեսնում, ահա մի խումբ գաւառացիներ, որոնց կրօնա-  
փոխ անելով, միմեանց կապած բերել էին, հետները տանե-  
լու: Ասլանը մօտեցաւ ընկերների հետ, արձակեցին նրանց  
կապանքները և անվերջ համբայրներով գարեցին միմեանց.  
Իսկ երբ ձորից դուրս ելան բարձունքը, տեսան գաւառի  
դրութիւնը, որը հեռուից ներկայացնում էր Սուդմի պատու-  
կերը. սակայն բարեբաղդարար երկնքից լրացցիչ ծուամք  
չէր իշնում: Իսկ Ասլանը գաւառի աւերումը տեսնելով, յու-  
զուած սրտով ասաց թամուրին ու Շէյխ-Բղինին:

—Եթէ ձեր Աստուածը կամ մարդարէն էր այդպէս  
հրամայել, տես ահա նրանց խարդաւանական դառն պտու-  
ութ, որ կերաք մեղանից: Ապա Շէյխ-Բղինի աջ ձեռքի  
կէս մասը կտրելով ասաց.—Եւ դռ իսլամի կրօնաւորդ,  
գնա, ես քո կեանքիտ բուրըովին վերջ չտալու համար,  
արձակում եմ քեզ՝ միայն թողնելով քեզ վրայ մի այն-  
պիսի յիշեցուցիչ նշան, որ դու մինչեւ քո մահդ չմուանաս  
մեր Ամենակարող Աստծուն և Նրա Որդի Յիսուս Քրիստոսի  
ահեղ և արդարագատ գատաստանը: Տեսնում ես գաւառից  
բարձրացող այն թանձր ծիփ քուլաները, յիշիր, որ նրանց  
հիմ բարձրանում են և այն անմեղ ոգիք, որոնք ձեր խւա-  
մականներից անյագ սրերին ճարակ են դարձել. գնա ուրեմն,  
ասկայն չըմուռանաս նոյնապէս պատմելու քո մեծ մարդարէ-  
ին, որ այդպէս էր հրահանգել ձեզ. գնա և պատմիր նրան  
մեր ճշմարիտ հաւատի և Նրա հզօր զօրութեան մասին: Եւ  
որովհետև նա չէր իմացել այդ ամենը, ուստի դու որ ճաշա-  
կեցիր, ամեն անգամ քո կիսատ ձեռքդ տեսնելիս, յիշիր,  
որ ժողովրդիդ քարոզես, անարդարութեան դէմ՝ արդարու-  
թիւն և զրկանքների դէմ՝ առատաձենն վարձատրութիւն անել  
և սիրով վիրաբերուել բոլոր ազգերի հետ: Գնա ուրեմն, գնա  
Շէյխ-Բղին, գնա քանի որ շուտ է, արթնացրու քեզ առաքող  
մարդարէին և այս արդարագատութիւնը պատմելով հանդերձ,  
քարոզիր և խրատ կարդա նրան, որ այլ ևս անմեղ արիւն  
թափելու կոչեր չանի. բաւական է որչափ թափեցիք:

—Այս իշխան, բաւական է.—ասաց Շէյխ-Բղինը դող-  
դոջուն ձայնով:

—Եթէ բաւական է, գնա ուրեմն, գնա, բայց միայն  
ժողովրդիդ քարոզելու ամենառաջին պայմանն այս կըլինի,  
որ պիտի պարտարեցնես նրանց, բարեկամական և բաղա-  
քավարի վիրաբերմունք ցոյց տան այն բոլոր հայերին, որոնք  
ճանապարհորդութիւններ են կատարում իրենց քաղաքների  
կամ գիւղերի միջով, և երկրորդ, սէր ու համերաշխութիւն  
ցոյց տան հային մօտիկ գտնուող աշիրները: Մի խօսքով,  
գնա, գնա և պատուիրիր այն ամենին, որոնք ընդ միշտ հա-  
րուածում են քրիստոնեաններին. թող գրան վերջ տան, և  
ձեռք քաշեն մեղնից, եթէ ոչ, այն ժամանակ ձեր ցեղն այն-  
պէս կրծնջենք մեր արիական ուժով, որ աշխարհիս երեսին  
այլ ևս ոչ մի աշիր չի մնայ:

— իմ սրբազն պարտականութիւնը թող լինի, — ասաց  
Շէյխ-Բգինը, — որ ինլամի կլօնաւորս կատարելու եմ մեծ  
իշխանիդ պատուէրներն, առանց ի նկատի ունենալու մար-  
դարէյիս կոչը, ապա արձակուելով գնաց էր հայրենիքը:

Իսկ Թամուրն այնքան էր ծեծուել երիտասարդներից,  
որ ուժն ու զօրութիւնը կտրուել էր, միշտ յետ էր ընկնում:  
Այդ անսնելով Ասլանն, ասաց. — Տղէքը, շան կաղալուն չընա-  
ւատաք, քաշ տուէք դրան: Կըմէ-Հմդէն ու Քլո, Մկրէն իսկոյն  
կաշկանդեցին ոտները ու քարշ տալով տարան:

Առաւօտեան արշալոյսը զեռ նոր էր հալածել գիշե-  
րային խաւարը, որ արշաւախումբը հասաւ Դալվորիկ, ուր  
հասնելուն պէս Ասլանը Թամուր էլ-աղասու մարմինը պի-  
պեսից բարձր դարպանից, ուր իրրև անարդանք մնալով,  
թոչունները գիշատեցին:

Դալվորիկը ծածկուած էր մոխրակոյտի սև սաւանով: Էլ  
չըկային այն թռչունների դայլայլիկը, որոնց տեղ միայն  
թագաւորում էին չարագուշակ բուերի սվոց-վայրցները:

Որբացած երեխաններն հեծկուալով «մամօ», «մամօ»  
ասելով իրենց մայրերին էին վնասում, որոնց մեծագոյն  
մասը փլատանների կոյտերի տակն էին տապալուել: Այրուում  
էին անմեղ ծերուկների մարմինները: Տեսարանը սրտաշարժ  
էր, տեսնողին անմիշապէս յիշեցնում էր երեմիա մար-  
դարէի Բէթգէնէմհան ողբը: Ասլանը չէր կամենում մխի-  
թարուել, նա իր հայրենի տան փլատակների մէջ ողբալով  
իր ծնողներին էր փնտուում և առում. — Ո՞վ անմեղ ծերու-  
նիք, արդիօք ո՞ր անգութիւ սրին զոհ գնացիք. արդիօք ո՞ր  
լպիրշ զինուորն յօշտակ ծեր մարմիններն, ինչ արին  
ձեր մարմինները: Ո՞ն, ցաւալի է ինձ համար, այս ինչ գառն,  
ինչ սոսկալի կեանը է, Տէր Աստուած, արդիօք դա արդա-  
բութիւն է. Եթէ արդարութիւն է, թող այլպէս տանջուեն,  
չարչարուեն, որ Աստուծոյ մօտ չեն մեղանչել որ թըշ-  
նամու արարքներին հնազանդապէս խոնարհելով, նրանց  
ապտակներին միւս երեսներն են գարձրել և Յիսուսի խա-  
չըն իրենց ուսին դրած զոլգոթա են բարձրացել որպէս զի  
դրանցով վտանգն անցնէին: Սակայն այ աշխարհ, լսիր,  
խուլ մի գտանար, տես, մի կուրանար և վկայ եղիր, որ  
ահա այդ է արդար ու անմեղ մարդկանց բաժինը: Ապա ար-

տասուքը սրբելով այդտեղից դուրս եկաւ, և ընկերների հետ  
վրայ տուին գէպի գիւղամիջից բարձրացող մուխը: Դա եկե-  
ղեցին էր, որ շրջապատուած էր հրդեհով, սակայն քարա-  
շէն լինելու շնորհիւ անվլաս էր մնացել:

Ասլանը մօտեցաւ եկեղեցուն. որտեղից լսուեցին աղա-  
ղակի ձայներ. — Տղայք, — ասաց Ասլանը կէս ուրախացած. —  
Աստուծոյ սիրտը զեռ ևս գթում է մեր վրայ, որ՝ ահա,  
լուռում են եկեղեցուց մարդկանց ձայներ:

Ընկերները մօտեցան, ականջ դրին, նոյն բանը և իրենք  
զգալով, շտապեցին ասելով. — Ի սէր Աստուծոյ, հրդեհը ան-  
ցընենք. միաժամանակ սկսեցին ձայնել եկեղեցու ներսը,  
որտեղից հայերը ճանաչելով իրենց որդոց ձայները, մանա-  
ւանդ Ասլանին, որ ամենքին ծանօթ էր, աղաղակեցին. — Ահա  
մեր տղայքը. ապա բանալով եկեղեցու գուռը՝ դուրս եկան  
ուր գաւը կորցրած մաքու նման՝ մայրը որդուն, որդին մօրը,  
կինը մարդուն, մարդը կնոջն էին ֆնտուում եկեղեցու գաւ-  
թում. բայց ամենից հետաքրքիր ֆնտուողը մեզ ծանօթ թորոս  
Պապն էր, որը ցուաը ձեռքին նեցուկ տալով, դողդոջուն քայ-  
լերով առաջ եկաւ, գտաւ Ասլանին և գրկելով նրան ճակատը  
համբուրեց ու ասաց. — Ո՞վ քաջ պատանի, թնդ ամենաբարի  
Աստուածն այսուհետո կօրացնի քո ոյժերը, որ քո ընկճուած  
եղբայրներիդ միշտ ազատարար լինեա, թշնամուդ առաջ միշտ  
անյաղթ հանդիսանաս, և մեր այս Վաթանն, որ արեան  
գնով ենք ձեռք բերել ազատ պահես պիղծ և մոլի ոտնակո-  
խութիւնից. այս ասելուց յետոյ, ծերունու կուրծքը անծայր  
ուրախութիւնից ուժգին բարախեց և որդուն գրկած մի շատ  
խորից մի Վաթանան ասելու հետ աւանդեց հոգին:

Թողնենք այդ, զառնանք մի փոքրիկ ակնարկով գէպի  
մեր գլխաւոր հերոսներին — Ասլանին ու Շահմարանին:

Այն անհատները, որոնց յաջողուել էր փախչելով իրենց  
գլուխն ազատել՝ երբ գաւառի խաղաղուելը լսեցին, ամենքն  
էլ դուրս գալով երենց ճգնարաններից վերադաշան իրենց  
գիւղերն: Այդ իսկ ուրախառիթ վերադաշի հետ Ասլանն  
անհամբեր սրտով սպասում էր Շահմարանի վերադաշին,  
սակայն աւզա, նա չըվերադաշաւ և նրա մասին ոչ ոք մի  
լուր չըբերեց Ասլանին:

Նոյնպիսի տոգորուած հոգւով սպասում էր Շահմարանի

վերադարձին իր մայրը, որի սիրտն այճաքան ի խոր չըխոցեց  
և ոչ Սաքոյի մահը, որքան կծկծեցնում էր նրան իր որդե-  
կորոյս լինելը: Աննան տատանում էր, երբ մտարերում էր  
իր գուստը Շահմարանին: Եւ մի քանի օր շարունակ ողբա-  
լով, կարճատե հիւանդութիւնից յետոյ, կնքեց իր մահկա-  
նացուն:

Աննայի յուղարկաւորութիւնը կատարուեց Ասլանի մի-  
ջոցաւ, որը թաղումից յետոյ մերթ մտածմունքով էր պաշար-  
ում, մերթ ևս տան անկիւներում պտուցներ էր անում. սա-  
կայն նա իր ցանկացածին չըգտաւ: Նա երկար ժամանակ  
մտածեց, և երբ երեակայեց իր սիրելոյ գեղաժպիտ հայեացքի  
ուրուականը՝ րոպէապէս ապշեց, վարանման նշաններ երեա-  
ցին նրա արիական շարժման մէջ, սակայն իրան զսպելով  
կամդ առաւ, զգաստացաւ և վերադարձաւ Դալվորիկ:

### Գ. Հ. Ո Ւ Խ Խ . Բ.

Շահմարանի յափէտակուելու յայտնուիլը:

Զաւադը Շահմարանին փախցնելիս տասնեակ օրերով  
շարունակ ճանապարհորդութիւն էր կատարում ապաստա-  
նելով քարանձաւների, ձորերի, խոտ ու թռւիերի մէջ,  
մինչեւ որ հասնում է մի հայրնակ գիւղի, ուր թափառական  
մի անձն յայտարարելով իրան, պահուում է այդ գիւղի մէջ:

Բայց Շահմարանը թէն իր համեստադէմ տեսքով ու  
գեղեցկութեամբ ամենաառաջինն էր համարւում իր շրջա-  
պատում, սակայն որպէս կին, ամուր էր որպէս երկաթ, նա  
իր սուրբ ուխտի զաշինքը կուել էր Ասլանի հետ, որի համար  
և զոհուելու պատրաստ էր: Նա երբէք, երբեկցէ երկիւղ չէր  
կըում Զաւադից, որը չընայելով ամենայն օր հրէշտար հա-  
րուածում ու զանազան սպասնակիներ էր տալիս. սակայն  
ի զուր էին անցնում այն ամեն չարամիտ ջանքերը, գար-  
ձեալ Շահմարանն անխախտ մնաց իր ուխտի մէջ: սակայն  
աւաղ, որ նրա կանացի քնքուշ մտքի յենարանը չըդիմանա-

լով այդ չարքաշ կեանքին՝ խելագարուեց և մի օր Զաւադի  
բացակայած ժամանակ ուժգին ճշալով և գոչելով դուրս թը-  
ռաւ տանից և «Սասունցի Ասլան» ասելով փախուստ առաւ  
դիւղից, անյայտացաւ, որի հետեւից զնաց և Զաւադը:

Զաւադը երկար վնատելուց յետոյ, երբ չի կարողանում  
գտնել, վերադառնում է Դալվորիկ ինքն իրեն ասելով.—Ես  
կըլերադառնամ Դալվորիկ ու ամեն չամք գործ կըդնեմ Աս-  
լանին սպանելու, և եթէ այդ ինձ յաջողուի, կըյաջողուի և  
Շահմարանին տիբանալս. որովհետեւ Ասլանի կիսդանի լինելը  
խանգարում է Շահմարանին գրաւելը, իսկ եթէ Ասլանին  
սպանուած տեսնի, այն ժամանակ ստիպուած՝ ինձ կըդիմի:

Անցաւ մի առժամանակ, բայց Շահմարանի անունը  
Ասլանի յիշողութիւնից երբէք չէր գնում, և նա վճռեց՝ Ան-  
պայման պիտի վնատեմ նրան մի քանի յայտնի տեսկերում  
աւելի այնտեղ, ուր քարկոծ ենք արել աշխրներին, որ մէ  
գուցէ աշխրները յափշտակած լինէին, որոնց հետ և նրան  
քարկոծ արած լինենք, և այդ ստոյդ իմանալու համար, պէտք  
է փնտուեմ և գտնեմ նրան, որպէսզի նրա նշխարներն իր  
ժամանակին փոշի զանալով չըխառնուի իսլամների պիղծ  
փոշուն:

Ասլանը մինչ այդ էր մտածում, որ ահա Զաւադը Շահ-  
մարանի ուրուականով պաշարուած, չէր հասկանում ուր է  
գնում, մէկ էլ կարծես թէս սատանան նրան հրելով մացրեց  
Ասլանի գաճիճը: Ասլանը տեսնելով նրա անժամանակ նիրս  
գալը, զարմացած հարցրեց.—Խէր լինի Զաւադ, ինչ կայ  
այս ժամանակ:

—Խէր է իշխան, ձեր կանչելու համար եմ եկել:

Ասլանը նկատելով Զաւադի շփոթուած դրութիւնն,  
ասաց.—Ես քեզ չեմ կանչել բայց լաւ ես արել որ եկել ես,  
այդ միննոյն է, քանի որ պէտք է կանչէի քեզ. երեի այդ  
էլ քո միտքդ շփոթող մարգարէն է արել, այս, ասաց ու  
բարձր ձայնով ծիծաղեց. ապա շարունակելով ասաց.—Դէս  
ուրեմն զնա, շուտով իմ ձին պատրաստիր, կըպատրաստուեն  
և դու. ես կամենում եմ փոքր ինչ ման գալ. շնուր, զնա, քնա  
քանի որ օրը չի տարածամել:

Նենդամիտ ծառան ուրախացած շուտով դուրս թնաւ  
դահլիճից, ինքն իրեն վնթինթալով զնում և ասում էր.—Ահա  
գիտեմ, որ այժմ իմ գործը պիտի յաջողուի, և յուսով եմ,

որ կարժանանամ նպատակիս, որովհետեւ հենց ներկայ ըոպէ-  
իցս Ասլանի կեանքը իմ ձեռքին է, որ եթէ կամհնամ՝  
կարող եմ ապրեցնել, իսկ եթէ ոչ կըմեցնեմ.

Զաւաղը ձիերը պատրաստեց, Ասլանը զինուած դուրս  
եկաւ ու նստելով իր նժոյգը, իջաւ Գէյլէ-գուզան ձորը:

Երգում է «Գարդու լացէք սարի սմբուլ» երգի եղանակով:



արեր, ձորեր, ասէք ինձի,  
եարիս տեսամք աննման,  
Նա ուր զնաց կամ ով տարաւ,  
Ման եմ զալիս անգիւման:

Շահմարանի հատը չը կայ  
Ոչ Հինդում, ոչ Հապէշում.  
Եարիս պէսը երբէք չը կայ  
Ամբողջ արար աշխարհում:

Ախ իմ եարի սիրոյ կայծը,  
Անանցնելի հուր դարձաւ,  
Սրտումս Սասնոյ հէք արկածը  
Անբուժելի վէրք դարձաւ:

Եարիս դարդը սաստիկ խորունկ,  
Սրտիս վէրքը խոցոտեց  
Նրա ձգող սիրոյ թափը  
Կեանքիս թելը կտրատեց:

Միակ բաղդս էր այս աշխարհում  
Այն նազելին իմ կեանքի,  
Նա իմ թագն էր, թագ պարծանաց,  
Լուսաշափին աշխարհի:

Ախ, նազելի եարիս վասքով,  
Պիտի պճնէլ մեր դաւառ,  
Իսլամ ազգը չէր յագեցած,  
Նրան էլ տարաւ աւար:

Այս ինչ ցաւ էր, ոհ Տէր Աստուած,  
Որում ծնաւ ինձ աշխարհ,  
Մանուկ օրիցս մինչի ցարդ  
Չունիմ հանգիստ ու դադար:

Մէկ կողմից որ Հայոց ազգի  
Թշուառութիւնը Դու դիտես,  
Քանի՞ տարի է հալածուած,  
Միթէ այդ Դու չը դիտես:  
— Տաժանակիր աշխատանքով  
Կապլենք լսեղած, պանդուստ եղած,  
Միթէ միայն Հայոց ազգին  
Էր տարագիր վիճակուած !

Ես ուր դիմեմ ով Աստըւած,  
Դու տուր ինձի մէկ իմաստ,  
Ճարտար, հմուտ, խոհուն գործով  
Դիմեմ եարիս գրկաբաց:  
Քո ո. սիրոյն Տէր Աստըւած,  
Ահա այստեղ կամ զինուած,  
Ուր որ զրկես պիտի զնամ,  
Միայն լինինք ազտառուած:

Վրէժ, վրէժ պիտի կոչեմ,  
Արար աշխարհ շրջելով,  
Պիտի ման զամ, եարիս գտնեմ,  
Նոյն իսկ կեանքս զոհելով:

Մինչ Ասլանը ողբալով իր սիրելուն էր փնտռում, Զա-  
ւադը ուշքի գալով, ինքն իրեն սասց.—Ահա հասաւ սպանման  
ժամն.—ու սուրը բարձրացնելով, յարձակուեց Ասլանի վրայ:  
Բայց Ասլանը քնած չէր: Նա նկատեց ծառայի այդ յանդուզն  
վերաբերմունքը, սուրը մերկացրեց և Զաւադը տապուեց,  
ընկաւ Ասլանի ոտների տակ. ապա հասկանարով որ ինքն այլ  
ևս գոյութիւն չունի, ուստի կիսամեռ ձայնով ասաց:

— Ներիր ինձ իշխան, ներիր իմ ապերախառութեանս, որ  
մինչի այժմ գործել եմ քո դէմ. ներիր ինձ և մի իզուր  
տանջիր անձդ, որովհետեւ «նա» այստեղ չէ, այլ «նրան»

գաւառից տարել եմ.—խօսքը Շահմարանի մասին էր: Ուրիմն իշխան, ներիր ինձ, որ ես ապերախտ գտնուեցայ քո մօտ և հաւատացած եմ, որ հենց իմ ապերախտութեանս համար Աստուած ինձ պատժելով մատնեց քո ձեռքը. ներիր ինձ: Զաւադի վերջին խօսքերն աղաւաղուեցան:

Ասլանն իր ականջներին չըհաւատալով կրկին հարցրեց, ասաց.—Զաւադ, ում և ուր տարար:

«Շահմարանին ին ԱՌԱՐԵԿԵԼՔ».

Եղաւ պատասխանը: Ասլանը բաւականանալով այդ պատասխանից, վերադարձաւ տուն, պատմեց մօրներեն պատահած իրողութիւնը:

Մայրն ասաց.—Այդ անցքերի մասին ես շատ լաւ յիշում եմ, որ այն ապերախտը հանգուցեալ հօրդ պատուէրը կատարելու տեղ, պատեհ ժամանակ է համարել ու նրան փախցրել է. ուստի զաւակս, նրա մասին այլեւս մի մտածիր, հանգիստ կաց. երբ կենդանի է, որու զարձեալ կըտեսնես նրան:

Այդ ինչ էք ասում մամօ, այդքան բան իմանալուց յետոյ զարձեալ չըմտածեմ, այդ անհնարին բան է, որովհետեւ մարդ ինչ վէրք, ցաւ ու վիշտ էլ որ մոռանայ, բայց սրտի եարէն չի կարող մոռանալ, սրտի եարէն շատ թէժ է. անա մամօ, նրա սիրոյ կայծը այլում է ինձ և տանջում երբ յիշում եմ.—Արգեօք նա կենդանի է, կամ այժմ ո՞րտեղ է. եթէ տակաւին նա կենդանի է, ապա արդեօք բարի՞ է այն անձը, որի խնամքին յանձնել է յանդուցն ծառան: Ո՞չ, ոչ, մամօ, ես չեմ հաւատում թէ նա մինչեւ այժմ կենդանի լինի. չեմ հաւատում նրա համար, որ եթէ նա կենդանի լինէր, մի բոլէ չէր սպասի, այժմ՝ վերադարձած կըլինէր գաւառը: Ուրմն մամօ, ես իմ կարծիքը փարտելու համար, պիտի ման գամ, և թէկուզ ո՞րտեղ էլ որ լինի՝ պիտի գանհմ, թէ մեռած, թէ կենդանի, յամենայն գէպս պիտի փնտում նրան, որովհետեւ ես գժուարանում եմ ձեզ բացազրելու իմ սրտի այն ջերմ զգացումն, ինչ որ ես եմ զգում. որպէս զի այդ մատանջութիւններից ազատուեմ, ամբողջ Արևելքը պէտք է շնչեմ, ոտնակոլի անելով պէտք է փնտում՝ նրա ո՞ր տեղ և ինչ լինելը ստուգապէս իմանամ և ապա դադար առնեմ:

ԳՂՈՒԽ Թ.

Ասլանի դեպի Արեւելք ռւդեւորաւիրը.

Անցաւ ծերուկ ձմեռն, եկաւ երիտասարդ գարունը, որն իր բնազդմամբ ուրախառիթ էր լինում մարդկային ազգին: Գարնանային իւրաքանչիւր մի եղանակը կամ տեսքը միշտ գեղաժպիտ էր, մանաւանդ լեռնցու համար և ամենքին գուարճութիւնն էր պատճառում: Բնութեան այդ հոսանքի հետ լեռնցին գուրգուրելով իր գաշտերին՝ ուրախ ժպտում էր:

Սակայն աւանդ, որ այդ ուրախական ժպիտը չըմնաց լեռնցուն, կարծես թէ մի նզովք է Նախախնամութիւնից, որ լեռնցին ժպաւու իրաւունք չունի:—Խամբեցան երփներանդ ծաղիկներն զաշտերից, լուցին թուչունների դայլայլող ձայններն լեռներից, իսկ արեգակը, որ ամենքին ուրախառիթ էր լինում, ծածկուեցաւ թուխալ ու մառախլապատ ամպերով: Եղանակների այդ մելամազձուու տարափոխութիւնն էր լեռնցին էլի զգալով մի նախազգացումն՝ տիրեց:

Եղանակների այդ խնովայոյդ ժամանակների հետ Սասունի իշխանը ճանապարհորդական պատրաստութիւնն էր տեսնում. մետաքսեայ խուրջինը լցորեց ճանապարհի առատ պաշտոնը հագաւ իր ճանապարհորդական զգեստը, պատշաստեց նոյնպէս իր արարական նժոյգը, զարդարեց նրան գեղեցիկ սաղափազարդ թամբով, տարածեց նրա կրծքի վրայ պաճուծանքներով զարգարուած սինարանգը, որը սրտի ձևով կպած էր կրծքին, կախարզող աչքերից ազատ պահելու համար, ոլորեց կնգածն գարզածն գարձրեց նժոյգի արծաթափայլ ազին, և զուան զուշզունն ամուր կապելուց յետոյ, բեղերը ոլորեց, որոնք հասնում էին մինչեւ ականջները, զինուեց, մետաքսեայ խուրջինը, որի ըերանը պատրաստուած էր փականքներով՝ փակեց և զնելով թամբի յետերի կողմը՝ ամուր կապեց «զանցիկ բաղիով», իսկ ինքն իր բոլոր «ասլանաթով» սպասում էր, մինչև որ ծառաները կախ լնկան անպանզակից, որ արծաթից էին շինուած, ուժեղ կերպով բռնեցին, և նա ոտքը զրեց ասպանդակը, վարկենապէս ցատկեց նստեց նժոյգի վրայ, իր շնորջը բոլորածներին վերջին հրաժեշտ տալով, հեռացաւ Սասունից:

Նրան տեսնողը՝ մարդ թէ կին, ծեր թէ պատանի, հեռուց հեռու կանգ էին առնում, ձեռքերնին ծալած, կը ծքերին գրած, սպասում էին նրա գալու անցնելուն, ապա երբ մօտենում էր իրենց, խորին յարգանքով մինչև գետին զլուխ էին խոնարհում իրենց սիրեցեալ իշխանին, իսկ ի պատաժան այդ ամենին, Ասլանը փոխադարձաբար գլուխ էր տալիս: Այդ ձեռվ իր հրաժեշտը տալով, թողեց իր Վաթանը, հեռացաւ, և իրան առաջնորդ ընտրելով «Շահմարանին Արեկը» խօսքերը, դիմեց Արեկը:

Ճանապարհորդում էր Ասլանը. սակայն նրա ճանապարհորդութիւնը կատարւում էր կուսական լեռների վրայով, ամենի ձորերի և անտառների միջով: Յաճախ հանդիպում էր կանանց և աղջեկների խմբերի, որոնք որպէս գուսանն հայոց, առանձին առանձին խմբակների բաժանուած, մերթերգում էին իրենց կուսական մեղեղիներն և մերթ շրջելով, իրենց շերամների համար կերակուր էին հայթայթում: Սուքա երր տեսուում էին անտառով անցնող մի որ և է ճանապարհուրդ, իսկոյն գալիս և կարգով շարւում էին ճանապարհի վրայ, ճանապարհորդին մտիկ տալու համար: Նոյնը կատարեցին և Ասլանի անցնելուն, եկան շարուեցան ճանապարհի վրայ և ոտից գլուխ ուշադրութեամբ նայում էին Ասլանին. սա ևս հետաքրքրուում էր նրանցով. ուշադրութեամբ նայում էր և անցնում,—իր հետքրքութիւնը Շահմարանն էր:

Կուսական անտառում շատ փնտոելոց յետոյ, դուրս եկաւ մի ամայի դաշտ, ուր հանդիպեց մի փոքրիկ գիւղի և առանց կանգ առնելու առաջացաւ դէպի գիւղը: Բաղդիքերմամբ գիւղացիներից մէկը կանգնած էր փողոցի գլխին:  
—Ախաէր, դուք ի՞նչ էք պաշտում, հարցեց Ասլանը:  
—Աստուածն է մեր պաշտածը. եղաւ պատասխանը:  
—Ուրեմն ի՞նչ ազգ էք:  
—Խայ քրիստոնեայ ենք:

Ասլանը բաւականանալով գիւղացու պատասխանից, նժոյգից վեր եկաւ և երբ գիւղացու հետ խօսելով գալիս էին, գիւղացին ասաց.

—Ախպրացու ապա դու ի՞նչ մարդ էք:  
—Ես էլ խայ եմ, ձեր հաւատից. պատասխանեց նա:  
—Ո՞ր տեղացի:

— Սամնեցի:

Գիւղացին այդ պատասխաններից չը բաւականանալով, կրկին հարցրեց.  
—Ապա ի՞նչ գործ ունիս այս կողմէնքում:  
—Կին եմ կորուսել, նրան եմ վնասուում. պատասխանեց Ասլանը, խոր հոգոց հանելով: Գիւղացին մատը կծեց, երբ անձանօթ ճանապարհորդից լսեց իրեն մի ծանօթ իրութիւն, և կամեցաւ պատմել նրան, սակայն օրը տարաժամ էր, իսկ իրողութեան պատմելն էլ երկար կը տեէր. ուստի յարմար համարեց առ այժմ թողնել և ճանապարհորդին հրաւիրեց իր տունը, որը սիրով յանձն առնելով հետեւ իր առաջնորդին:

Գիշեր էր. Ասլանը գիւղացու տանը նստած, կողմնակի զբոյցներով էր զբաղուած, որից խոյս տալով Ասլանը, հարցրեց.—Բարի գիւղացի, ի՞նչ է ձեր անունը:

—Մըրտո. եղաւ պատասխանը:  
—Իսկ ձերը. հարցրեց Մըրտօն:

—Ասլան է իմ անունը:

—Ո՞ր տեղացի ասացի՞ք,

—Սամնեցի:

—Բայց ո՞ր գիւղից: զի՞ն մարդուսուն և սիրացու մասին:

—Թըլ-հորիկից:

—Աւրեմն ձեր այս կողմէր գալու գլխաւոր պատճառը ի՞նչ էր ասացի՞ք:

—Իմ գալու պատճառն իմ նշանածիս փնտոելն է. Դպաւաստիանեց Ասլանը խոր հոգոց հանելով: Հայութեած երես:

—Նշանածիդ անունն ի՞նչ էր մասնաւուն ու վայաց:

—Շահմարան:

Մըրտօն զաձեալ մատը կծեց ու աւելի մօտենալով Ասլանին, կրկին հարցրեց.—Այս աղջիկը ձեր նշանածն էր:

Այս իմ ապագայ յոյսն էր, իմ կեանքի ուղեկցուն ի՞նչ:

—Եպա ի՞նչպէս է եղել, որ նա անցել է այս կողմերը, և ո՞ր տեղից գիտեաւ:

Մանրամասութիւնն ինձ յայտնի չէ, սակայն այս գիտեմ, որ իմ պատերազմում եղած ժամանակ, մեր ուուր հանդակը նրան փախցնելով դէպի արևելք է բերել:

Մուրհանդակի անունն ի՞նչ էր:

—Զաւադ:

Գիւղացին այս պատասխաններից բաւականանալով, ասաց.—Այս, հենց այդպէս է, ինչպէս որ ասացիք. Զաւադն այս աղջկան այս կողմ էք բերել. նոյն իսկ այս յարկի տակ, որ այժմ դուք էք նստած:

«Այս յարկի տակ» խօսքն երբ լսեց Ասլանը, նստած տեղից վեր ցատկեց և ուզում էք որ տան յարկը վերցնէր, հիմնահատակ անէր խեղճ Մըրդոյի գլխին, բայց Մըրդոն մեղմացրեց. Ասլանն սկսեց Շահմարանի ուրուականի հետ խօսելով պառոցներ անել տան անկիւններում:

Մըրդոն տեսնելով իր հիւրի խառնաշփոթ դրութիւնը, որից վտանգ էք սպառնում իր տանը, զղջաց իր տեղեկութիւն տալը և կամենալով նրան մեղմացնել, ասաց,—Ասլան ախպէր, մի շփոթուիր, նստիր, նստիր փոքր ինչ հանգստացիր և ապա ես կը պատմեմ քեզ այն ամենը, ինչ որ գիտեմ այդ մասին:

Ասլանը մեղմանալով նստեց, իսկ Մըրդոն սկսեց պատմել Շահմարանի և Զաւադի մասին հետեւելը:

—Բաջ իշխան, ինչպէս դուք, որ այսօր պատահեցաք իսձ, նոյնպէս և պատահեցան ձեր ասպած Զաւադն ու Շահմարանը. երկուսին էլ հիւրասիրելով՝ պահեցի իմ տան մէջ: Զաւադը, որին դուք սուրհանդակ անունն էք տալիս, իր փախուստի պատճառը այլ կերպ էք պատմում մեզ, ասում էք՝ —Մեր կողմէրը գուշում է, և աւերում, կոտորած յաճախ են տեղի ունենում, որոնց համար էլ փախուստ ենք առել:

Ասլանը չը բաւականանալով այդ պատասխանից, հարցրեց.—Իսկ Շահմարանի համար ինչ էք ասում:

—Ասում էք՝ իմ կինն է:

—Ի՞նչպէս էին վարում միմեանց հետ, հարցրեց դարձեալ Ասլանը առանձին հետաքրքրութեամբ:

—Ատելութեամբ, ամբողջ օրը աղմուկ էին բարձրացնում: Զաւադը Շահմարանի հետ վարում էք որպէս մի գագանի, ծեծում էք նորան որպէս գրմէշի, որից Շահմարանը խեղագարուից, և մի օր Զաւադի բացակայած ժամանակ գզզուած շորերով, հերազակ մազերով, գոռալով դուրս թըռաւ տանից որպէս մի արիւծ և «Աստունցի Ասլան» ասելով

հեռացաւ մեր գիւղից, որից յետոյ երկուսի էլ երեսը ոչ տեսել ենք և ոչ էլ տեղները գիտենք:

Ասլանը բաւականանլով Մըրդոյի տուած այդ տեղեկութիւններից մեղմացաւ, սակայն սիրտը էլի յուզւում էր. նրան տանջում էր Շահմարանի տաժանակիր չարչարանքը, մանաւանդ խեղագարուելը, որ մաշում էր իրեն, և կառկածում էր՝ գուցէ և սպանած էլ լինէր անմեղ արարածին:

Ահա այդ երեսոյթի յուշերով Ասլանը առաւօտեան վաղ վեր կենալով, ձեռքը տարաւ իր դրպանը, մի քանի հատ ոռկի դուրս բերելով տուեց Մըրդոյին, որից և շնորհակալութիւն յայտնելով նստեց իր արարական նժոյզը, միայն ականջին գինդ անելով Մըրդոյի ասած «Աստունցի Ասլան» խօսքերը և շարունակեց ճանապարհը դարձեալ «Շահմարանին Արևելը»:

Նարունակութիւնը տես Բ. հատորում.



ՀԱ ԿԱՐԵՎՈՅ ԱՆ ԱՐՄԱՆ ԱՐՄԱՆ ԱՐՄԱՆ  
ՎԱՐԴԱՐ ՎԱՐԴԱՐ ՎԱՐԴԱՐ ՎԱՐԴԱՐ ՎԱՐԴԱՐ ՎԱՐԴԱՐ

«Վաթան» և «Սասուն»-ը գրի առնելով սամսեցիներից, որի երեսյթների վրայ յէնուելով՝ ընդարձակեցինք և լոյս ընծայելով նուիրեցինք ընթերցողներին սոյն ոճով, թէ տեղական լեզուով էլ գրի առանք վերև յիշուած Յովհաննէս քահանայի պատմածով, սակայն յարգելի պատճառներով թողեցինք, պահելով միայն տեղական նշանագրութեան պատկերն իր նուրբ գաւառաբարբառը սովորութիւններով հանգերձ, որը լոյս է տեսնելու «Վաթան» և «Սասուն»-ի Բ. հատորում, իբրև յաւելուած:

«Վաթան» և «Սասուն»-ի Բ. հատորի նիւթը կը լինի մեզ ծանօթ Ասլանի շառաւիդների մասին, որոնցից, իբրև մի պատմական հերոս, զլխաւոր տեղն է բռնելու «Բանէի Մանուկը». Սրա գործունէութիւնն եղել է ըստ մեծի մասին սար ու ձորերում միայնակ շրջելը. կեանքի զբաղմունքը գէնքն է եղել, որով մեծ սարսափի է աղդել իր շրջապատի քիւրդերի և տաճիկների վրայ. այդպիսով դառնալով Արծափի հերոսը՝ վանի, երզրումի և Արարատի շրջաններում ամենից զօրաւիզն է հանդիսացել:

1910 թ. 24 Փետր.  
Վաղարշապատ:



15085  
ԳՀԸ

ՀՀ Ազգային գրադարան



NL0328675

1508

ՀԱՐՄ.  
3-324

«Վայթան» և «Սասուն»-ի գինն է 25 կոպէկ:

10-ով գնողներին 40 կ. 10 կը լինի:

Յանկացողները կարող են գիմել մեզ հետեւալ  
հասցեով՝ Թուածուալ տիոգրաֆիա Արտոն Ավան, կամ  
Վաղարշապատի «Արագած» գրավաճառանոցը:




Մեզ մօտ գանւում են Զոջանց տուն կամ  
Սասմայ ծուեր ժողովրդական վէպը. արտատպած  
«Արարատ» ամսագրից. երեք փոփոխակ միասին  
գինն է 50 կոպ.



Տպագրութեան նամար պատրաստ են՝

1) «Զուլալ-Շահ Խոսրով-Շահ, Բարակ-Շահ» և  
Որթէ-Շիրին» Հայոց ժողովրդական վէպը:

2) Հայ ժողովրդական «Նիստ ու Կացը» Խոյեց-  
ւոց Հայթաղ զիւղի բարբառով. սակայն այդ եղիու  
կարեոր գրուածքներու գրամական սուլ միջոցիս պատ-  
ճառով հրատարակել չեմ կարողանում:



1  
0

21090

3-32482.